

Ա. ԳԻՒՑԵՐԱՆՏԻ ԳՐԱԳՈՐԾՎ

Ա. ՖՐՈՒՊ.

ԽՆՁՊԵՍ ԿԱՌԱԽՑԵԼ
ԸՆԴՈՒՆԵԶ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒ ԺՈՂՈՎՐԴՈՒԹՅԱՆ ԱԲ ԱՌԴԻՒՅՈՒԹԵՎ

Ա. ՖՐՈԼՈՎ

621
8-99

310 200/2010

Ա

ԻՆՉՊԵՍ ԿԱՌՈՒՑԵԼ ԸՆԴՈՒՆԻԳ



ՀԱՅԱ ԺՈՂԿՈՄՄՈՎԵՏԻ ԿԲ ՈՎԴԻՈՎԿՈՄԻՏԵ
ԵՐԵՎԱՆ

1940թ.

ԵՆԴՊԵՍ ԿԱՌՈՒՑԵԼ, ԸՆԴՈՒՆԻՉ

Նախ քան կառուցման անցնելը, պետք է միանգամայն պարզ պատկերացնել, թե ինչպիսի պահանջներ են առաջադրվում ընդունիչն, որը մենք մտածել ենք շինել: Ամենից առաջ պետք է ասել, որ ընդունիչ կառուցելն այնքան էլ հեղու բան չէ: Կառուցողից պահանջվում է որոշակի տեխնիկական գիտելիքներ, համբերություն և համառություն: Անցնելով կառուցման՝ պետք է բրցել, որ առանց համառ աշխատանքի և համբերության չի հաջողվի ստանալ լավորակ կոնստրուկցիա:

Աշխատանքի ճշտապահորեն կատարելը հանդիսանում է ամբողջ աշխատանքի հաջողությունը որոշող վճռական գործոն։ Կոնստրուկտորն թափթափած լինել չի կարող, եղել են շատ դեպքեր, երբ տեխնիկապես լավ պատրաստված ուղղուսնիրողը գեպի մանրութներն ունեցած իր անձշտապահ, անուշադիր և արհամարհական վերաբերմունքի հետևանկորպ կառուցել է շատ վատ ընդունիչ։ Մրա հետ միասին քիչ չեն դեպքեր, երբ քիչ տեխնիկական գիտելիք ունեցող, բայց ուշադրությամբ, ճշտապահորեն և սիրով աշխատող ուղղուսնիրողը հաջողությամբ է կատարել բարդ կոնստրուկցիան։

Ծառ անգամ ընդունիչի կառուցումը հանգում է դեմակների, պանելի, արկղի, շկալայի և ընդունիչի կառավարման սիստեմի ընտրության, այսինքն ռազմակիրովի աշխատանքի այն էտապին, երբ արդեն ընդունված է սիսեման և մնում է միայն նրան ձևավորել:

Իրականում սխեմայի ընտրությունը չի կարելի անջատել կառուցումից։ Միևմայի, նրա առանձին էլեմենտների, դետալների ընտրելը, ընդունիչի ընդհանուր ձևավորումը՝ այս բոլորը մըտնում է «ընդունիչի կառուցում» հասկացողության մեջ։

Այսպիսով, եթք մենք մեր առաջ դնում ենք պահանջներ, որոնց պետք է բավարարի ենթադրվող կառուցվածքը, մենք «կառուցվում» խոսքը ասելով՝ պետք է հասկանանք աշխատանքի ամբողջ յիկը, սկսած սխեմայի ընտրությունից և վերջացած ամբողջ կառուցվածքի արտաքին ձևամորթում:



565
41

ԸՆԴՈՒՆԻՉԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Բոլոր ընդունիչները, ըստ նրանց նշանակության, կարելի է բաժանել հետևյալ խմբերի:

Բնդումիչներ տնալին պայմաններում հաղորդման կայանները ընդունելու համար:

Բնդումիչներ հաղորդման կայաններն ընդունելու և գրամուգնային գրառումների վերաբարպաթյան համար:

Բնդումիչներ տեղետեսություն ընդունելու համար:

Օդուգումներ սիրողային կապի ժամանակ կարծ ալիքներ օգտագործելու համար:

Երջիկ տիպի ընդունիչներ:

Էստ սննման տեսակի ընդունիչները կարելի է բաժանել հետևյալ տիպերի:

Փոփոխական հոսանքի ցանցից սնվող ընդունիչներ,

Մարտկոցներից սնվող ընդունիչներ,

Ռնկի կերսալ սնումով ընդունիչներ.

Բնդունիչներ, որոնք հաշվված են մեխանիկական կերպարությաներից աշխատելու համար:

Բնդունիչներին ներկայացվող ընդհանուր պահանջներին են պերաբերվում՝

Ալիքների դիապազոնը, որոնք պետք է ընդունիչը Զգայնություն անտեննայի ընդունած ազդանշաններին:

Ընտրողականություն:

Հաճախականության բնութագրում:

Ոչ գծային աղավաղումների տոկոս:

Հնչման դիմացիկական դիապազոն:

Գարգություն և գործածելու ու վերանորոգման հարմարություն:

Կառուցման էժանությունը:

Հարմար և գեղեցիկ արտաքին:

Խնչքան շատ են տեխնիկական պահանջները, այնքան բարդ և թանգ է լինում կոնստրուկցիան:

Ընտրելով ընդունիչի տիպը՝ համաձայն նրա նշանակմանը, հաշվի առնելով շահագործման և ընդհանուր տեխնիկական պահանջները, կարելի է անցնել ընդունիչի կմախքային սխեմայի ընտրությանը:


Բնդունիչի ընդրված տիպը կարելի է պատկերացնել մի շարք

կմախքային սխեմաներով։ Այդ իսկ պատճառով, որպեսզի դյուրինի լուծել այն խնդիրը, թե հնարավոր սխեմաներից ո՞ր մեկի վրա պետք է կանգ առնել, մենք կփորձենք մեկնաբանել նրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները, ինչպես նրանց առաջարկվող տեխնիկական պահանջների, նույնպես և դրանք իրականացնելու տեսակետներից։

ԸՆԴՈՒՆԻՉԻՆ ԿՄԱՆՔԱՅԻՆ ՍԽԵՄԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Եթե պետք է կառուցել ընդունիչ տեղական կայաններին ընդունելու համար, ապա այդպիսի ընդունիչի համար կարելի է օգտագործել ինչպես սուպերհետերոդինային սխեմա, նույնպես և ուղղակի ուժեղացման սխեմա։ Սակայն սուպերհետերոդինային սրխեմայում առանձին էլեմենտները շատ կիխեն, այդ իսկ պատճառով ընդունիչի կոնստրուկցիան կիխենի բարդ և թանգ։ Մի քիչ ավելի զգայունությունը, որը հատուկ է սուպերհետերոդինային սրխեմայի հական գեր չի խաղում և չի արդարացնի նրա վրա ծախսած միջոցները և կորցրած ժամանակը։

Այսպիսով կարելի է հետեւվություն անել, որ այս դեպքում նպատակահարմար է ընտրել ուղղակի ուժեղացման սխեմա։



Նկ. 1

Ենթադրենք թե պետք է կառուցել ընդունիչ հեռավոր ընդունման համար։ Այստեղ նույնպես կիրառելի են 2 սխեմաներ՝ սուպերի և ուղղակի ուժեղացման ընդունիչի։ Այս դեպքում ևս սու-


պերհետերոդինային սխեման շատ առանձին է լեռնատներ կունենա
և հետեղապես ավելի թանգ կլինի; Երկու սխեմաների՝ 'զգայու-
նությունն էլ միատեսակ կարող է լինել. անհրաժեշտ ընտրողա-
կանություն նույնպես կարող է ստացվել ինչպես մեկ, նույնպես
և մյուս սխեմայով: Վերաբարեպարման որակը երկու սխեմայում
նույնպես չի կարող նկատելիորեն տարբերվել: Այսպիսով ստաց-
վում է, որ տվյալ դեպքում ևս ավելի ձեռնտու կլինի ընտրել
ուղղակի ուժեղացման սխեման:

Բայց և այնպես ու ամենին այդպես չէ: Ուղղակի ուժե-
ղացման ընդունիչներում լավորակ զգայունություն և ընտրողա-
կանություն կարելի է ստանալ լավ լամպեր և կոնտուրներ կի-
րառելիս, ընդորում նրա կոնտուրների թիվը պետք է ավելի լինի,
քան սուպերինը (այսուղ նկատի են առնվում փոփոխական կոն-
դենսատորներով լարված կոնտուրները), իսկ ու կապված է աղ-
բերեամբ փոփոխականության կոնդենսատորների եռապատճենու-
կամ մինչև անգամ քառապատճենու հետ:

Բացի դրանից, այստեղ պահանջվում են լավ որակի կոճեր,
որը նրանց քանակի մեծության պատճառով ստեղծում է զգակի
դժվարություններ նրանց պատրաստելուն:

Այնքան, որքան ամբողջ ուժեղացումը մինչև դեռեկտորը
ստացվում է բարձր հաճախականության ուժեղացուցիչի միջո-
ցով, ուստի և դժվար կլինի ձեռք բերել ուժեղացուցիչի կայում
աշխատանք. դեռալները շաստի վրա տեղավորելիս նույնպես
մեծ դժվարությունների հանդիպենք: Սուպերհետերոդինային ըն-
դունիչն իր հերթին պահանջում է մեծ քանակությամբ դեռալներ
և ինամաշան լարում, որը պահանջում է մեծ հմտություն ու գի-
տելիք: Սուպերի լավ լարման համար պարտադիր է օժանդակ
գիներատորի, ինչպես նաև լամպային կամ ուրիշ ոլտմետրերի
օգտագործումը: Եթե սադիսիրողը իր արամագրության տակ ու-
նի այդպիսի ապարատուրա, այդ ժամանակ նա սուպերից կատա-
նա շատ, քան ուղղակի ուժեղացման ընդունիչից:

Կարճ ալիքների դեպքում սուպերհետերոդինը անկամակած ա-
վելի լավ արդյունքներ է տալիս, քան ուղղակի ուժեղացման
ընդունիչը:



Նկ. 2


Կարելի է հետևյալ եզրակացությանը գալ:

Ուղղակի ուժեղացման սխեման հեռավոր ընդունման համար
նախատեսնված ընդունիչի համար կարելի է ընտրել այն դեպ-
քում, երբ սուպերհետերոդինային ընդունիչը կարպավորելու հա-
մար բացակայում են համապատասխան գործիքներ, նույնպես
և այն ժամանակ, երբ ուղիղափորող դեռ չունի շատ թե քիչ
բարդ ընդունիչ շինելու փորձ: Մնացած բոլոր դեպքերում պետք
է կիրառել սուպերհետերոդինային ընդունիչի սխեման:

Կարելի է պատահել և այնպիսի դեպք, երբ ուղիղափորողը
ցանկանում է ունենալ հեռավոր կայաններն ընդունող և գրամո-
ֆոնային պլաստինկաները բարձրորակ վերաբարեպող ընդունիչ:
Այսպիսի ընդունիչի համար պետք է ընտրել սուպերհետերոդի-
նային սխեմա:

Սխեմայի ընտրելուց հետո անհրաժեշտ է լուծել կմախալին
մանրամասն սխեմայի և բոլոր օժանդակ էլեմենտների խնդիր-
ները, ինչպես օրինակ, Ռիմկ-ի (ուժեղության ավտոմատիկ կա-
նոնավորում), ընտրողականության կանոնավորման, ուժեղության
կանոնավորման, տեմբքի կանոնավորման, խանգարումի իւլ-
ցուցիչի և այլ խնդիրները:

Թիական է, որ միայն տեղական կայաններն ընդունելու հա-



Նկ. 3

ճար նախատեսած ընդունիչի օժանդակ էլեմենտները առհասա-
րակ սահմանափակ կլինին, քանի որ գրանցից շատերը չեն կա-
րող օգտագործվել:

Տեղական և հեռավոր ընդունման համար նախատեսնված
ընդունիչների լրիվ կմախքային սխեմաները վերջնական տեսքով
ցուց են տրված 1-ին նկարում:

Այդպիսի սխեմաներ կարելի է շատ կազմել, և յուրաքան-
չուր սպիտակուլ ընտրելով սխեման, կլոտնի իրեն համար ավելի
լի հարմար սխեմա. միայն պետք է գիտենալ, թե որտեղ և ինչ-
պիսի գերազանցություն պետք է օգտագործել այս կամ այն օժանդակ
էլեմենտը:

Փորձենք տալ ընդհանուր տեղեկություններ սխեմայի ան-
հրաժեշտ կամ ցանկալի էլեմենտներ ընտրելու վերաբերյալ:

Ե՞րբ և ո՞րտեղ պետք է օգտագործել ուժեղության ավտոմա-
տիկ կանոնավորումը:

Տեղական ընդունման ընդունիչներում անհրաժեշտ չէ կիրա-
ռել ՈՒԱԿ, որովհետեւ տեղական կայաններն ընդունվում են հա-
մարյա միատեսակ ուժեղությամբ: Այստեղ ավելի անհրաժեշտ է
հանդիսանալ ուժեղության ձեռքի կանոնավորիչը:

Ուժեղության ձեռքի կանոնավորիչը կարելի է դնել ցածր
հաճախականության ուժեղացուցիչից առաջ կամ առաջին դետեկ-

տորային լամպից առաջ: Ավելի լավ է այն միացնել ընդունիչի
մուտքին, քանի որ այսպիսի միացումը հնարավորություն է տա-
լիս դետեկտորում ստանալ անհրաժեշտ լարվածություն և պահ-
պանել ծանրաբեռնվածությունից բարձր հաճախականության ու-
ժեղացուցիչների կասկազները: Սովորաբար այսպիսի ընդունիչ-
ներում, որպիս առաջին լամպ (դետեկտոր) օգտագործում են
արիոդ կամ պինդուտ և կիրառում են «Հզր» դետեկտորացման
սխեմա:

Ընդունականության վատացումը, որը ստացվում է տվյալ
դեպքում անտեսնային կոնտուրին զուգահեռ միացվող դիմադրու-
թյան աղղեցության հետևանքով, ընդունիչի տվյալ տեղի համար
էական չէ և կարելի է արհամարժել:

Տեղավոր ընդունման ընդունիչներում լարման մեծությունը
առաջին լամպի ցանցում կարող է փոխվել այն սահմաններում,
որը կախված է ընդունվող կայանի կողմից ստեղծվող դաշտի
լարվածությունից: Այսպիսի դեպքում շատ ցանկալի է, իսկ եր-
բեմն մինչև անգամ անբաժանելի է ՈՒԱԿ-ի կիրառմանը: Մուակ-
հետերովինային ընդունիչների համար ավելի նպատակաշարմար
է կիրառել ՈՒԱԿ-ի ավելի պարզ սխեմաներ: Այսպիսի դեպքերի
համար կարող է տիպիկ հանդիսանալ 2-րդ նկարում ցուց տըր-
ված սխեման: Այդ նկարում պարզության համար 6X6 լամպը
նկարված է լամպի երկու ինքնուրույն «կես»-ների տեսքով:


Տեղավոր կայաններն ընդունելու համար նախատեսած ընդու-
նիչներում շատ օգտակար է հանդիսանում տեմբրի կանոնավոր-
ությը: Այն պետք է կիրառել և բացառապես տեղական ընդուն-
ման համար նախատեսնված ընդունիչներում, եթե վերջիններս
միաժամանակ հաշվված են գրամոֆոնային պլաստինկաների
վերարտադրման համար:

Տեմբրի կանոնավորումը կարող է լինել ինչպես սահուն,
այնպես և աստիճանավոր:


Տեմբրի կանոնավորման լավ որակ կարելի է ստանալ 3-րդ
նկարում ցուց տվյալ սխեմայով:

Սակայն, այնուամենայնիվ այս սխեմային էլ հատուկ են
որոշ թերություններ: Առաջին՝ գոփիսական դիմադրության այս-
պիսի միացման դեպքում ելքի հզորությունը որոշ շափով ընկ-
նում է, նամանավանդ երբ կտրվում են ձայնային դիապազոնի
բարձր հաճախականությունները: Երկրորդ՝ գոփիսական դիմա-

դրության շարժիչի, որոշ դիրքերում (ցածր դիմադրությունների՝ ժամանակի) դիմադրության վրա անջատվում է մեծ հզորություն,



Vol. 4




vii, 5

որը կարող է նրան շարքից հանել: Օրինակ՝ եթե տեմբրային կանոնավորիչը միացած է 6Փ6 լամպի անողին և նրա վերի ծայրի և շարժիչի միջի դիմադրությունը հավասար է 10.000—

20,000-օմի, այդ ժամանակ նրա վրա առանձնացվող հզորությունը կհասնի մինչև 2 վատտի: Եշարկե այսպիսի հզորության դեպքում՝ վաճառման մեջ գտնվող փոփոխական դիմադրություններից շատերը ուժեղ կտաքանակ կամ կայրվեն: Փոփոխական դիմադրության աշխատանքի պայմանները կարելի է թեթևացնել նրան ցածր հաճախականության ուժեղացման նախնական կառկադի անողի շղթային միացնելով:

Հաճախ կանոնավորիչը միացնում են յածր հաճախականության ուժեղացման նախնական կասկադի ուժեղացուցիչի ցանցի շղթային. բայց այդ գեպքում կանոնավորելու ժամանակ շարժակի և հիմնական դիմադրության միջև վատ հազման հետևանքով կարող է ազմուկ առաջանալ: Ցուց տված թերությունները կարելի են վերացնել աստիճանավոր կանոնավորիչով, որը միացվում է վերջին լամպի անողային շղթային: Այսպիսի միացման սխեման ցուց է տրված 4-րդ նկարում:

Վերջին սխեմայի թերությունը հանդիսանում է նրանում,
որ նրանով չի կարելի ստանալ տեմբրի սահուն կանոնավորում,
որը խիստ ցանկալի է գրամոֆոնային գրառման վերարտա-
դրման ժամանակ:



၁၄၆

Այսպիսով կարելի է հետևություն անել, որ պարզ ընդունիչների ժամանակ լավ է կիրառել տեմբրի աստիճանավոր կանոնավորից, իսկ բարդ ընդունիչների և գրամոֆոնային գրառումների վերարտագրումների համար հատկացված ընդունիչների համար ավելի ցանկալի է տեմբրի սահուն կանոնավորումը:

Ժամանակակից ընդունիչներում կիրառվող ընտրողականության կանոնավորումը նույնպես կարող է օգտագործվել բազմաթափային սուպերների կոնստրուկցիաներում: Նրան պետք չէ կիրառել այն ընդունիչներում, որոնք հեռավոր կայանների ընդունման համար չեն նշանակված կամ նախատեսնված են տեղական կայանների բարձորակ ընդունման համար: Ընտրողականության կանոնավորումը նպատակահարմար է կիրառել այն ընդունիչներում, որոնք ամենաքիչը միջնական հաճախականության երկու լավ փիլտր ունեն: Ընտրողականության կամոնավորման սիմեմաներից մեկը ցույց է տրված 5-րդ նկարում:

Ընդունիչում փոփխական ընտրողականություն կիրառելիս պետք է ունենալ ցածր հաճախականության բարձրորակ ուժեղացուցիչ, հակառակ դեպքում փոփխական ընտրողականության առավելությունները չեն կարող լրիվ օգտագործվել: Ավելին, ցածր հաճախականության վատ ուժեղացուցիչի ժամանակ փոփխական ընտրողականության կիրառումը ոչ միայն ավելորդ կլինի, այլ և վնասակար, որովհետեւ բաց թողնվող հաճախականությունների լայն շերտերի ժամանակ հաղորդումը ուղեկցվում է մեծ ազմուկներով:

Ուզգակի ուժեղացման ընդունիչներում բավականաշափ դրվագը է իրագործել փոփխական ընտրողականություն:

Ժամանակակից ընդունիչներում կիրառվող օժանդակ էլեմենտներից մեկն է հանդիսանում էքսպանդերը:


Ընդունիչներում էքսպանդերի կիրառելով տարրվելը չի կարող լրիվ արդարացվել: Կոնստրուկցիան ընտրելիս անհրաժեշտ է ուշադրությամբ կշռել նրա գործածման թեր և դեմ եղած բոլոր նկատառումները: Պետք է նշել, որ եթե ընդունիչը լավ է աշխատում գրամոֆոնային պլատինիկաների նվազման ժամանակ, ապա արտասանությունը կամ երգը խիստ կաղախատվեն: Դրա համար էքսպանդեր պետք է կիրառել միայն բարդ համակցված ռադիոլաներում, ընդորում նրա միացումը պետք է անպատճառ նախատեսնել այն դեպքում, երբ հաղորդման բնույթը չի պահան-

չում բարձրախոսության դիավագոնի գինամիկական լայնացում: Էքսպանդերի սիմեման ցույց է տրված 6-րդ նկարում:

ՍԻԵՄԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ.

Ընդունիչի կմախացին սիմեմայի և նրա մեջ մտնող օժանդակ էլեմենտների ընտրությունից հետո կարելի է անցնել նրա հիմնական էլեմենտների ընտրությանը: Այդ էլեմենտների ընտրությունը կատարում են այն տեխնիկական պահանջների հիմանվար, որոնք առաջարրվում են ընդունիչին, հաշվի առնելով նրանցից յուրաքանչյուրի անհատական առանձնահատկությունները: Ավելի լավ կլինի սիմեմայի էլեմենտների ընտրությունը սկսել ելքային կասկադի կողմից, որովհետև նա է որոշ շափով նախորշում անհրաժեշտ սիմեման:

Ելքային կասկադը կարող է հավաքվել տարբեր սիմենտերով: Ենթադրենք, որ պահանջվում է հավաքել տեղական ընդունման համար նախատեսած ընդունիչի հզոր ուժեղացման սիմեմա: Եթե տեղական կայաններն ընդունելու դեպքում ցանկանում են ստանալ փոքր քանակի կայանների բարձրորակ վերարտագրում, ապա ավելա դեպքում պետք է առավելագույն ուշադրությունը դարձնել ցածր հաճախականության ուժեղացուցիչի վրա:



Նկ. 7

Այդպիսի ուժեղացուցիչին առաջարրվում են մոտավորապես հետեւյալ տեխնիկական պահանջները:

1. Ուժեղացուցիչի ելքի հզորությունը պետք է բավականաշափ լինի բարձրախոս ընդունման համար:

2. Բաց թողման շերտը պետք է գտնվի 50-ից մինչև 8000 Հերցի սահմաններում:

3. Աղավաղումները պետք է մինիմալ լինեն:

Ելքային կասկագի լամպերը ելքի փոքր հզորության դեպքում սովորաբար աշխատում են «Ա» դասի ռեժիմով, այսինքն նրանց աշխատանքային կետը ընտրվում է խարակտերիստիկ պժի ուղղագիծ դրշանի ձախ մասի կենտրոնում:

Այն հզորությունը, որ ցանկանում էն ստանալ ընդունիչը, նիմ չի գերազանցում 3 վատտից, ապա նպատակահարմար է կիրառել պարզ (մեկտակտանի) սխեմա:


Ավելի հզորության դեպքում սխեմայի ընտրումը կապված է մի շարք դժվարությունների հետ: Մի կողմից թվում է, թե հզորության մեծացում կարելի է ստանալ երկու լամպի հասարակ զուգահեռ միացումով. Ֆիշտ է, որ այդ դեպքում հզորությունը մեծանում է համարյա 2 անգամ: Սակայն այդ ժամանակ ելքի տրանսֆորմատորի սկզբնական փաթաթվածքի միջով անցնող հաստատում հոսանքը նույնպես նորմալից 2 անգամ ավելի կլինի, իսկ ոս, իր հերթին, դժվարություններ է առաջացնում ելքի տրանսֆորմատորի կառուցման ժամանակ, որովհետև այդ դեպքում տրանսֆորմատորը ստացվում է բավականին մեծածավալ, և հետևապես թանգ:

Մյուս կողմից պուշպուլային սխեմայի օգտագործման դեպքում, ելքային տրանսֆորմատորի պատրաստելը ավելի հեշտ կլինի. Նրա շաբար կլինի փոքր և հետևապես ավելի էժան կնտարի: Այստեղ պետք է ուշադրությամբ կշռադատել յուրաքանչյուր տեսակի ուժեղացման թերությունները և առավելություններն առանձին-առանձին, ընտրելով պահանջներին և համապատասխանող սխեմա:

Միատակտ սխեմայով հավաքած հզոր ուժեղացուցիչն ավելի պարզ կլինի, քան պուշպուլային սխեմայով հավաքածք, նրա մոնտաժն ավելի հեշտ և արագ է կատարվում: Բայց լամպերի միևնույն քանակի դեպքում պուշպուլային սխեմայից 25 տոկոս ավելի մեծ հզորություն կարելի է ստանալ քանի միատակտ սխեմայից:

Պուշպուլային սխեման կիրառելու դեպքում հաղորդումների մեջ մանող աղավաղումները քիչ կլինին, բայց այդ դեպքում պուշպուլային ուժեղացուցիչի մուտքին պետք է միացնել հատուկ

տրանսֆորմատոր կամ օգտագործել նախնական ուժեղացուցիչը ըստ ինվենտերի սխեմայի:



Նկ. 8

Ամբողջ վերև ասածից կարելի է եղանակացություն անել, որ սիրողական պայմաններում պարզ սխեմաներով ուժեղացուցիչներ պետք է գործածել այն դեպքում, եթե պահանջվող հզորությունը չի գերազանցում 3 վատտից: Մեծ հզորության համար նպատակահարմար է կիրառել պուշպուլային սխեմա:

Ավելի հզոր ուժեղացուցիչներում, որոնք երեքն կիրառվում են սիրողների կողմից, բացի Ա դասի ռեժիմից, կարելի է օգտագործել նաև ԱԲ, ԱԲ₂ և Բ դասերի ռեժիմ: Բ դասի ռեժիմը բոլորից նպատակահարմար է օգտագործել մաքտելոցային ընդունիչներում, որտեղ ելքային կասկագի օգտակար գործողության գործակիցը հանդիսանում է վճռող գործոն: Տարբեր ռեժիմների համար տիպային սխեմաները ցուց են տրված 7-րդ նկարում:


Շաբարային ուժեղացուցիչի սխեմայի ընտրելուց հետո անցնում էն ցածր հաճախականության ուժեղացման նախնական կասկագի սխեմայի ընտրությանը:

Նախնական ուժեղացման կասկադներին ներկայացվում են հետևյալ հիմնական պահանջները:

1. Կասկագի համեմատաբար մեծ ուժեղացում, որը կապահովի ծայրային ուժեղացուցիչի շարժումը:

2. Մինիմալ ոչ-գծային աղճատումներ:

3. Հաճախականության լավորակ խարակտերիստիկա:



Ալ. 9

Այդ կասկագները կարող են կատարել 8-րդ նկարում ցույց տված սխեմաներից մեկով: Այդպիսի սխեմաներ հանդիսանում են.—սխեմա տրանսֆորմատորային կապով, սխեմա դրուելով և սխեմա դիմադրությունների վրա:

9-րդ նկարում ցույց են տրված այդ ուժեղացուցիչի երկու չիմուական սխեմաներ: Այն տվյալները, որոնց օգնությամբ կարելի է ընտրել այդ սխեմաների առանձին էլեմենտները յուրաքանչյուր մասնակի դեպքի համար, ցույց են տրված աղյուսակում.

Աղյուսակ 1.

Ua	90					
	0,1		0,25		0,5	
R _c	0,1	0,25	0,5	0,25	0,5	1
R _{ce}	0,4	0,4	0,4	1	1	1,4
R _{cm}	1200	1100	1300	2400	2600	3600
C _{ce}	0,05	0,01	0,05	0,03	0,03	0,025
C _{cm}	5	5	5	4	3	2,5
C	0,02	0,06	0,006	0,008	0,005	0,003
U _c	17	22	38	23	32	33
K	41	55	66	70	85	92
						93
						120
						140

Ua	180					
	0,1		0,25		0,5	
R _c	0,1	0,25	0,5	0,25	0,5	1
R _{ce}	0,4	0,5	0,5	1	1	1,5
R _{cm}	1000	750	800	1200	1600	2000
C _{ce}	0,05	0,05	0,05	0,04	0,04	0,04
C _{cm}	6,5	7	7	5	4	4
C	0,02	0,01	0,006	0,008	0,005	0,0035
U _c	42	52	59	41	60	60
K	51	69	83	93	118	140
					135	165
						165

1-ին աղյուսակի շարունակությունը

Ua	300					
	0,1		0,25		0,5	
R _c	0,1	0,25	0,5	0,25	0,5	1
R _{ce}	0,45	0,5	0,5	1	1	1,5
R _{cm}	500	450	600	1100	1200	1300
C _{ce}	0,07	0,07	0,06	0,04	0,04	0,05
C _{cm}	8,5	8	8	35,5	5,5	6
C	0,2	0,01	0,006	0,008	0,005	0,005
U _c	55	81	96	81	104	110
K	61	82	94	104	140	185
					161	350
						240

Սա—ւարում անողում (օլոերով) հավասար է անողի լարմանը մինուս լարման անկումը R_{ce} և R_{cm} ում:

R_{ce} — բևենագործան գիմադրությունը (մեզօմերով):

R_{cm} — անգամարժի գիմադրությունը (մեզօմեր):

C_{ce} — էկրանային ցանցի շրջափակման կոնդենսատորը (միկրոֆարադ):

C_{cm} — անգամարժի գիմադրության շրջափակման կոնդենսատորը (միկրոֆարադ):

C — անցման կոնդենսատոր (միկրոֆարադներով):

U_c — էլքի լարման ամպլիտուդա (ոլտերով):

K — կամպարի ուժեղացման գործակից:

K_{ce} — էկրանային ցանցի գիմադրություն (մեզօմերով):


Վերջին ժամանակ սկսել են որպես ծալրային կասկադ համախակի կիրառել Բ դասում աշխատանքի համար հաշված սխեմաներ: Այս կասկագներն իրենց ճոճման համար պահանջում են որոշ հզորության ծախսում, որը կազմում է մոտավորապես 0,2—0,5 լու:

Նախնական ուժեղացման կասկագը, որ հավաքված է, օրինակ, դիմադրությունների վրա, չի կարող ապահովել անհրաժեշտ



Հոճում: Դրա համար ցածր հաճախականության ուժեղացման նախական և մուտքի հզոր կասկադների միջև միացնում են «կիսահզոր» կասկադ, որը կրում է դրայվեր անունը: Դրայվերի համար լամպ ծառայում են 6Φ6 և C0-187, որոնք աշխատում են, որպես արիոդ կամ հզոր տրիոդ, օրինակ՝ Y0-104:

Այս կասկադը ելքինի հետ միացվում է առուշակային տրանսֆորմատորի օգնությամբ:



Նկ. 10

Մեծ աղջատումներից խուսափելու համար դրայվերի տրանսֆորմատորը սովորաբար ռենենում է միավորից փոքր տրանսֆորմացիայի գործակից:

Հասուկ նշանակություն ունի տրանսֆորմատորի երկրորդ փաթթավածքի դիմադրության մեծությունը. որքան քիչ է այդ դիմադրությունը, այնքան քիչ աղջատումներ կարող է մտցնել դրայվերը:

Յուրաքանչյուր ընդունիչի սխեմայի հետեւալ հիմնական էլեմենտը հանդիսանում է դետեկտորը:

Այժմս կիրառվում է անոդային, ցանցային կամ վիոդային դետեկտավորում: Ցանցային դետեկտավորումը (նկ. 10 բ.) կիրառվում է ուղղակի ուժեղացման ընդունիչների մեծ մասում: Անոդային դետեկտավորում (նկ. 10 ա.) համեմատաբար քիչ է աղատահում: Վերջապես դիոդային դետեկտավորում (նկ. 10 գ. և դ.) գլխավորապես կիրառվում է սուպերհետերոդինային և քիչ ուղղակի ուժեղացման ընդունիչներում:

Ցանցային դետեկտորը մեծ զգայնություն ունի և լավ աշխատում է ցանցին արվող փոքր լարումների ժամանակի: Ցան-

ցանցին գետեկտոր պիտք է կիրառել այն դեպքում, եթե ցանցականում են հեռավոր կայաններից ստանալ լավ ընդունուածը բարձր հաճախականության մեկ կասկածով: Տեղական ընդունուածն համար նշանակված ընդունիչներում այդպիսի տիպի դետեկտոր օգտագործելիս աղավաղումներ կստացվեն: Այդ աղավաղումների որոշ քացցման կարելի է հասնել, օգտագործելով ցանցային դետեկտորի տարատեսակություն՝ այսպիս կոչված հզոր ցանցային դետեկտոր, որը սովորականից տարբերվում է այն բանով, որ նրանում օգտագործվում է փոքր ունակության ցանցային կոնդակնատոր:

Ցանցային դետեկտավորում օգտագործելիս ուժեղության կանոնավորումն ընդունիչում պիտք է իրականացվի մինչև դետեկտորը:


Ավելի քիչ զգայում, բայց աղջատումներ քիչ տվող, Ցանցի անունը է դիոդային դետեկտորը: Դիոդային դետեկտորը կարելի է օգտագործել տեղական ընդունման ընդունիչներում բարձր հաճախականության ուժեղացման մեկ կասկածոց հետո, այդ ժամանակ նա աղջատումներ չի մտցնի և դժվար կլինի նրան ծանրաբենել: Նա նույնպես տալիս է լավ արդյունքներ հեռավոր ընդունման համար նշանակված ուղղակի ուժեղացման ընդունիչներում: Սակայն այս դեպքում բարձր հաճախականության ուժեղացման մեկ կասկադ բավական չի լինի և արդեն պիտք է կիրառել կրկու այդպիսի կատկադ:

ՀԱՆՁՆԱՐԱԲՎԱԿԱՆ ՈՒ ԺԻՄ

Աղջատական շաբաթ

Անոդային լարում Սա	100	100	250	250
Ելքանային ցանցի լարումը	12	30	50	100
Ցանցային տեղաշրջ	1:16	1,83	-2	-4,3
Տեղաշրջի դիմադրություն R_3 օմ	18.000	10.000	3.000	10.000
Հոսանք կատողում մա	0,63	0,18	0,65	0,43
Անոդային բեռնավորման դիմադրություն R_2 օմ	1	0,25	0,25	0,03
Շրջափակման կոնդենսատոր C_2 մկֆ	0,01	0,01	0,03	0,03
Ցանցային դիմադրություն հաջորդ լամպի համար R_4 օմ	1	0,5	0,25	0,25
Դեկավարող ցանցին մացվող աղջանշանի լարումը վ	1	1,6	1,2	1,4

Լավ արդյունքներ են ստացվում դիոդային դետեկտորները սուպերհիետերոդինային ընդունիչներում՝ օգտագործելիս, որտեղ նա կիրառվում է որպես երկրորդ դետեկտոր:



Նկ. 11


Սակայն դիոդային դետեկտորը նույնպես կարող է աղջատումներ առաջացնել: Աղջատումներն առաջ են գալիս այն բանի հետեւանքով, որ փոփոխական և հաստատուն հոսանքի համար դիոդի բեռնվածությունը միատեսակ չի ստացվում, քանի որ հիմնական R_1 բեռնվածքին (նկ. 11) զուգընթաց միացված են անցման և շրջափակման կոնդենսատորներից բաղկացած շղթաները, ուժեղության կանոնավորիչի դիմադրությունները և ցածր հաճախատկանության ուժեղացման լամպի ցանցի հոսակորուստի դիմադրությունները: Ամենից քիչ աղջավագումներ կլինեն այն դեպքում, երբ փոփոխական և հաստատուն հոսանքներին ցուցադրվող դիմադրությունները դիոդի բեռնվածքի ամբողջ շղթայում, որի մեջ մտնում են վերը հիշված բոլոր էլեմենտները, լինեն միմյանց հավասար: Մրան կարելի է հասնել այն դեպքում, եթե 15-րդ նկարում մուգ գծով անցկացրած շղթայի դիմադրությունը մի քանի անգամ ավելի մեծ լինի R_1 դիմադրությունից:

Այսպիսով ուժեղության կանոնավորիչի դիմադրությունը պետք է հնարավորության սահմաններում շատ վերցնել. մնացած բոլոր դիմադրությունները, որոնք գտնվում են կոնդենսատորի հետ հաջորդաբար միացման մեջ (փոփոխական հոսանքի շղթայում), պետք է նույնպես հնարավորության սահմաններում խոչըր մեծություն ունենան:

Սուպերհիետերոդինում երկրորդ դետեկտորին նախորդում է միջնական հաճախականության ուժեղացուցիչը: Սուպերի ընտրողականությունը և ուժեղացումը հիմնականում որոշվում է միջնական հաճախականության ուժեղացուցիչի աշխատանքով: Ակնհայտ է, որ ինչքան շատ կասկադներ ունի միջնական հաճախականության ուժեղացուցիչը, այնքան շատ կլինի ընդունիչի ուժեղացումը և ընտրողականությունը: Սակայն կասկադների մեծ քանակի դեպքում ուժեղացուցիչի լարումը գեվար կլինի. բացի դրանից՝ միշտ չի հաջողվում նրանից ստանալ կայուն աշխատանք: Փորձը ցուց է տալիս, որ շատ դեպքերում մեկ կասկադն ավելի կայուն է աշխատում, քան երկուը: Սա տեղի է ունենալ նրա համար, որ այն գործիքների օգնությամբ, որոնցով սադիմությունը օգտվում է սուպեր կարգավորելու ժամանակ, բավականաշափ դեվար է կարգավորել երկու կասկադ ունեցող ուժեղացուցիչը: Դրա համար միջնական հաճախականության ուժեղացուցիչի երկու կասկադի կիրառում կարելի է հանձնարարել միայն բացառիկ դեպքերում: Բացի դրանից, պետք է գիտենալ, որ դեպքերի ճշշող մեծամասնության համար միշտ մեկ կասկադը լինում է բավական:

Միջնական հաճախականության ուժեղացուցիչում հաճախ էական դեր են կատարում այսպիս կոչված ֆիլտրերը կամ միջնական հաճախականության տրանսֆորմատորները: Մի քանի տիպի ֆիլտրեր գոյություն ունեն, որոնցից յուրաքանչյուրն իր առանձնահատկություններն ունի: Ֆիլտրերի հիմնական տիպերի սխեմաները ցուց են տված 12-րդ նկարում:

12 ա. Նկարում ցուց է տված ունակային կապով ֆիլտրի սխեման: Այսպիսի սխեմայի առավելություններին պետք է վերագրել կապի փոփոխությունների պարզությունը կոնտուրների միջեվ, իսկ թերություններին — յուրաքանչյուր կոնտուրի առանձին-առանձին էկրանացման անհրաժեշտությունը:



Ֆլ. 12.

12 բ. նկարում ցուց է տրված ունակային զուգաճեռ կապով ֆիլտրի սխեման, որն իր բարդության հետեւանքով շատ քիչ է կիրառվում:

Միջկոնտուրացին ինդուկտիվ կապով ֆիլտրի սխեման (նկ. 12 գ.) ավելի հաճախ է կիրառվում: Նա կոնտուրների առանձին էկրանացում չի պահանջում. տվյալ սխեմայում կապի կանոնավորումը կատարվում է կոճերի տեղադրության փոխադարձ փոփոխման միջոցով: Կոնտուրների լարումը կիրառվում է յուրաքանչյուր կոճին զուգաճեռ միացված կոնդենսատորների ունակության փոփոխումով:

12 դ. նկարը նախորդից տարբերվում է նրանով, որ կոնտուրների լարումը կատարվում է մագնետիստական միջուկների տեղափոխությունով: Վերջին երկու սխեմաները հանդիսանում են ավելի պարզ և ընդունելի սիրողական ընդունիչներում:

Ֆիլտրի կոնտուրների միջի կապից է կախված միջնական հաճախականության ուժեղացուցիչի ընտրողականությունը, և հետեւապես, նաև ողջ ընդունիչի ընտրողականությունը ամբողջությամբ:

Թույլ կապի ժամանակ ֆիլտրի սեղոնանսի կորը մեկսապատճնի է լինում: Այդ ժամանակ ընտրողականությունը որոշվում է ֆիլտրի կոնտուրների որակով, իսկ կասկադի տված ուժեղացումը համեմատաբար փոքր է լինում: Կոնտուրները լավացնելու դեպքում կարելի է ստանալ սեղոնանսի ավելի սուր կոր, բայց դրա հետ միասին մոդուլացիոն է բաց թողնվող հաճախականությունների շերտը: Կապի աստիճանաբար ավելացումով կարելի է ձեռք բերել ֆիլտրի սեղոնանսի այնպիսի կոր, որի ժամանակ նրա ծայրը հարթ կլինի: Այդպիսի կապը կրիտիկական է կոչվում:

Կապի հետագա մեծացումը ուղղոնանսային կորի երկու սապատ է առաջ բերում, ընդ-որում նրանց մեջ տարածությունն այնքան մեծ կլինի, ինչքան մեծ լինի նրանց կապը:

Կապի մեծացումը կմեծացնի ֆիլտրի բացթողման շերտը, բայց շատ ուժեղ կապի ժամանակ, եթե սապատներն ուժգին բաժանվում են, ֆիլտրը ընդունիչի հաճախականական բնութագծի մեջ մեծ աղճատումներ կմտցնի:

Մեկ կասկադ ունեցող ընդունիչներում պետք է սնտրել միջնական հաճախականության ուժեղացման կրիտիկական կապ: Բաղդրորակ ընդունիչներում օգտագործվող մեծ բանակի կաս-

կաղների դեպքում կրիտիկականից մեծ կազ պետք է ընտրել: Մի կողմից դա հնարավորություն կտա ստանալ լավ ընտրողականություն, իսկ մյուս կողմից կատայվի լավորակ հաճախականական բնութագիծ:

Երկրորդ ֆիլտրը (միջնական հաճախականության ուժեղացման մեջ կասկադի ժամանակ) իր երկրորդ կոնտուրով միացվում է դիոդային դետեկտորին: Վերջինս ֆիլտրի համար բեռնվածք է հանդիսանում, բեռնվածք, որը ֆիլտրի ռեզոնանսային կորն ավելի է լայնացնում, այսինքն վատացնում է ֆիլտրի ընտրողականությունը: Դրա համար չի կարելի այսուեղ հանձնարարել երկու կորի զուտահեռությունը, եթե, այնուամենայնիվ, որևէ պատճառներով սա անհրաժեշտ լինի, այդ դեպքում ավելի լավ կլինի ֆիլտրում երկրորդ կոնտուրը շանել, այլ նրան դիոդի հետ կապել կոճի միջոցով, ինչպես այդ ցուց է տրված 13-րդ նկարում:


Միջնական հաճախականության կասկադի տված ուժեղացումը կախված է նաև ֆիլտրի կոնտուրի մեջ մտնող ինդուկցիայի և ունակության մեծությունների միջև եղած հարաբերակցությունից: Ինչքան շատ է ինդուկտիվությունը և ինչքան քիչ է կոնտուրի ունակությունը, այնքան շատ կլինի կասկադի ուժեղացումը: Սակայն ինդուկտիվության մեծացումն իր հերթին առաջ է բերում կոնտուրի որոշ վատացում՝ նրա ընտրողականության նկատմամբ: Բացի դրանից, շատ քիչ ունակություն վերցնել չի կարելի, որովհետեւ այդ դեպքում լամպերի փոխելու ժամանակ ֆիլտրի խանգարում կառաջանա: բացի դրանից, ՈՒԱԿ-ի ազդեցությունից, երբ փոխվում է լամպի մուտքի ունակությունը, ֆիլտրի լարման հաճախականությունը կայուն չի մնա, որն առաջացնում է ուժեղ աղճատումներ: Դրա հետեւանքով ֆիլտրի կոնտուրի մեջ մտնող ունակությունը պետք է լինի 50 մկմկֆ ոչ պակաս:

Սուպերհետերոդինային ընդունիչում միջնական հաճախականության ուժեղացուցիչի առջելն է գտնվում առաջին գետեր-ձևափոխիչը: Որպես առաջին գետեկտոր-ձևափոխիչ կարող է օգտագործվել պենդավորիտը (6Ա8 կամ CO—183) կամ խառնող լամպը (6Ա7):

Առաջին դեպքում գետեկտորը և հետերոդինը համատեղված են մեկ լամպում: Երկրորդ դեպքում ընդունիչում պետք է լինի առանձին հետերոդին:

Կարճավերային դիավագոն չունեցող ընդունիչների համար ավելի լավ կլինի գործածել պենտավորի:

Կարճավերային դիավագոնով ընդունիչների համար կարելի է օգտագործել ինչպես պենտավորի, այնպես և խառնող առանձին հետերոդինով: Պետք է նշել, որ խառնող լամպով և առանձին հետերոդինով կարճ ալիքների վրա ավելի հեշտ է լավ զգայնության հասնել: Ուկտրակարճավերային դիավագոն ունեցող ընդունիչների համար հարկ է լինում կիրառել խառնող առանձին հետերոդինով:




Նկ. 13

Միշին և երկար ալիքների վրա հետերոդինի հաճախականությունը միշտ աղճատումներ հաճախականությունից բարձր է վերցվում, զրա համար հետերոդինի կոնտուրի մեջ միացվում է շաղկապող (պենդավորի): Կոնդենսատոր:

Հետերոդինի հաճախականությունը կարճ ալիքների վրա կարող է լինել աղճանշանի հաճախականությունից բարձր կամ ցածր:

Առաջին գետեկտոր-ձևափոխիչը հետերոդինի ավելի բարձր հաճախականության վրա աշխատում է կայուն, բայց նրա զգայունությունը կարճ ալիքների վրա, համեմատած այն զգայնության հետ, որը կարելի է ստանալ հետերոդինի ավելի բարձր հաճախականություն օգտագործելիս, քիչ կլինի (մի բա-



Ակ. 14


նի անգամ): Եթե կարձալիքային դիապազոնում Հետերոդինի հաճախականությունը վերցվում է աղդանշանի հաճախականությունից քիչ, այդ դեպքում պեղինգային կոնդենսատորը միացվում է առաջին դետեկտոր-ձևափոխիչի ցանցային կոնտորին: Այս անգամ զգայունությունն ավելի բարձր կլինի, քան առաջին դեպքում, բայց սրա հետ միասին առաջին դետեկտորի աշխատանքի կայունությունը կվատանա և կարող է գեներացիա առաջանել: Գեներացիայից խուսափելու համար առաջին դետեկտորի կառավարող ցանցի շղթային միացնում են 50° օճ կարգի դիմադրություն:

Առաջին դետեկտոր-ձևափոխիչի տիպիկ սխեման ցույց է տված 14-րդ նկարում:

Սուպերերում սովորաբար կիրառվում են Հետերոդինների 2 չիմնական սխեման:

Անընդհատ դիապազոնով ընդունիչներում սովորաբար բոլորից հաճախ կիրառվում է Գարտելի սխեման, իսկ սեվեռակային (ԷԿՈՎԿԱ) լարումով ընդունիչներում կիրառվում են նաև Կոլպիցի սխեման: Այս երկու սխեմաներն ել իրենց համեմատական պարզությամբ բավականաշատ կայունություն են տալիս:

Հետերոդինի հաճախականության կայունությունը հանդիսանում է ընդունիչի լավ աշխատանքի հիմնական պայման:



Ակ. 15

Հետերոդինի կայուն աշխատանք կարելի է ստանալ ցանցային կոնդենսատորի ունակության և հոսակորուստի դիմադրության միջի հարաբերակցության ճիշտ ընտրելու միջոցով: Ինչքան այդ ունակությունը քիչ է, իսկ դիմադրությունը մեծ, այնքան կայուն կլինի Հետերոդինի աշխատանքը: Այս էլեմենտների ընտրությունը սովորաբար կատարվում է փորձնական եղանակով՝ Հետերոդինը կարգավոր լարում են մաքսիմալ հաճախականությամբ, որը կարող է ստացվել ընդունիչում, փոքրացնելով ցանցային կոնդենսատորի ունակությունը և ավելացնելով հոսապակասորդի դիմադրությունը, ձգտում են ստանալ այսպես կոչված ընդհատվող գեներացիա, որը պինամելիում լսելի է լինում պարբերական շակոցներով (այս երեվույթը երբեմն նաև «կաթոց» են անվանում): Սրանից հետո հոսապակասորդի դիմադրությունը քիչ պակասեցնում են, որպեսզի ընդհատվող գեներացիան դադարի:

Ոչ քիչ կարևոր է հանդիսանում նաև լարման կայունությունը, որը հետերոդինը տալիս է ամբողջ դիապազոնով: Որքան հավասարաշափ է լարվածությունը, այնքան հավասարաշափ է լինում ընդունիչի զգայունությունը՝ ըստ դիապազոնի:

Կապն անոդային և ցանցային շղթայի միջև երկարալիքային դիմապազոնի վրա կարող է լինել ինչպես ինդուկտիվ, այնպես էլ ունակային: Բայտ դիապազոնի ավելի հավասարաշափ լարվա-

ծովթյուն կարելի է ստանալ փոփոխական ունակացին կապի ժամանակ: Դա սովորաբար տեղի է ունենում մարտկոցային ընդունիչներում, որտեղ պենտագրիդի ձեւափոխման գործակիցը համեմատաբար փոքր է և այդ լամպի հետերոդինային մասի ձևափոխման սեպությունը նույնական փոքր է: Այս դեպքում կիրառում են ինդուկտիվ-ունակացին կապ:

Միջինալիքացին դիապազոնի վրա սովորաբար բավական է լինում միայն ինդուկտիվ կապը:


Կարճալիքացին դիապազոնի վրա կիրառում են ինչպես մաքուրի ինդուկտիվ կապ, այնպես էլ ինդուկտիվ-ունակացին կապ:

Հետերոդինի համար ոչ-քիչ էական է հանդիսանում նրա պաշտպանումը անոդային լարվածության հնարավոր տատանումներից, որը կարող է առաջանալ այն բանի հետեանքով, որ ծայրային կասկադի անոդային հոսանքի մեծ փոփոխությունները սննան ընդհանուր շղթայում առաջ են բերում լարման համեմատաբար խոշոր տատանումներ: Որպեսզի խոսափենք դրանից՝ հետերոդինի անոդային շղթային միացնում են ֆիլտր, որը բազկացած է դիմադրությունից և կոնդենսատորից:

Եթե լամպով հետերոդինի սխեման ցուց է տված 15-րդ նկարում:

Ինչպես ուղղակի ուժեղացման ընդունիչներում, այնպես էլ հեռավոր ընդունման համար նշանակված սուպերներում դետեկտորի առջև դնում են բարձր հաճախականության ուժեղացուցիչ: Բարձր հաճախականության ուժեղացման կասկադը ընդունիչի զգայունությունը և ընտրողականությունը բարձրացնում է:

Սուպերներում մեկ բարձր հաճախականության կասկադից ավելի շի կիրառվում: Բարձր հաճախականության կասկադների քանակը ընդունիչներում սովորաբար երկուսից ավելի շի լինում, իսկ ամենից հաճախի կիրառվում է մեկ կասկադ: Բարձր հաճախականության երկու կասկադը պահանջում է մեծ ուշադրություն կարգավորման ժամանակ և խստ դժվարացնում է ընդունիչի մոնտաժը, որովհետև այս դեպքում ուժեղացուցիչի առանձին շղթաների մեջ ոչ մեծ ունակացին կամ ինդուկտիվ կապը տանում է դեպի պարագիտային գեներացիա, որի վերացումը կոնստրուկտորից մեծ հմտություն է պահանջում: Հաճախ սիրողական ընդունիչներում ոչ բավականաշատ լավ կարգավորման հետեւանքով բարձր հաճախականության երկու կասկադները տալիս են ավելի վատ արդյունք, քան մեկը:




Նկ. 16

Եթե մի քանի ժամանակ առաջ բարձր հաճախականության ուժեղացուցիչների տարրեր սխեմաներ շատ կար, ինչպես օրինակ, կոնտուրն անմիջապես լամպի անոդին միացնելով, կոնտուրն անոդային շղթայի հետ տրասնֆորմատորային կապով, ավտոտրանսֆորմատորային և այլն, ապա վերջին ժամանակներու վլիխավորապես կիրառում են միայն տրասնֆորմատորային կապով սխեմաներ: Բարձր հաճախականության ուժեղացուցիչը վերջին սխեմայով ցուց է տված 16-րդ նկարում:

Բարձր հաճախականության առաջին լամպի ցանցի առաջ միշտ լինում է մեկ կամ մի քանի կոնտուրներից բաղկացած և այս կամ այն ձևով անտեսնայի հետ կապված սիստեմ: Պրեսելեկտորի նշանակումը հանգում է այն բանին, որպեսզի մինչեւ առաջին լամպի ցանցն ստեղծի բավականաշատ ընտրողականություն, այսինքն, թույացնի հարեվան կայանների ագդանշանները:

Ուղղակի ուժեղացման ընդունիչում պրեսելեկտորի անհրաժեշտությունն առաջանում է նաև նրանով, որ բարձր հաճախականության լամպի ցանցի վրա երկու ազդանշանի գործողու-



Նկ. 17

թյան ժամանակ առաջանում են այսպես կոչված խաչաձել աղճատումներ (կրոսմոդուլյացիա), որոնք արտահայտվում են նրանում, որ ցանկացած կայանն ընդունելու ժամանակ նրա ֆոնում գրանցուվ է ուրիշ կայան, տեղական կամ հեռավոր հզոր կայան։ Այս խանգարման բնույթը որոշելի շատ հեշտ է, ընդունվող կայանի աշխատանքը վերջացնելուց հետո կորչում է և խանգարող կայանի ընդունումը։

Որովհետեւ ուղղակի ուժեղացման ընդունիչում ընտրողականությունը որոշվում է կոնտուրների որակով և քանակով, իսկ լավ ընտրողականություն ցանկալի է ստանալ մինչևլ առաջին լամպի ցանցը, ապա զրա համար պրեսելեկտորում ամենից շատ կիրառում են երկու կոնտուր։ Որովհետեւ երկու լավ կոնտուրի առկայությունը, բացի լավ ընտրողականությունից, կարող է ստեղծել բաց թողնվող հաճախականությունների շատ նկա շերտ, իսկ դա իր հերթին վատացնում է հաճախականական բնութագիծը և վերաբռադրման որակը, ապա անհրաժեշտ ընտրողականություն և շերտ պահպանելու համար պրեսելեկտորի երկու կոնտուրները միացնում են այսպես կոչված շերտացին ֆիլտրի ձեկով։ Վերջինն իր սխեմայով միանգամայն համանման է այն ֆիլտրներին, որոնք կիրառվում են միջնական հաճախականություն ուժեղացուցիչում։ Տարբերությունը միայն նրանումն է

կայանում, որ պրեսելեկտորի ֆիլտրը լարվում է ոչ միայն ֆիլտրված հաճախականությանը, այլ ունի լարման որոշ դիապազոն։ Դրա համար ֆիլտրի յուրաքանչյուր կոնտուրին միացվում են փոփոխական կոնդենսատորներ։

Սակայն բացի լավ ընտրողականությունից և բավականաշատ լայն շերտից, որոնք որոշվում են կոնտուրների որակով և նրանց միջի կապով, ֆիլտրը պետք է ունենա նաև ուժեղացման կայունություն բատ ամբողջ դիապազոնի։ Ուժեղացման կայունությունը ֆիլտրներում ստացվում է ունակություն հաջորդաբար (նկ. 17 ա) և գույքահեռ ունակացին (նկար 17) կապով։ Այս երկու սխեմաներն էլ ստացել են լայն տարածում։


Պրեսելեկտորի բացակայությունը սուպերհետոքինային ընդունիչում առաջացնում է խանգարումների կողմից, որոնց հաճախականությունը բարձր է ընդունվող կայաններից միջնական հաճախականության կրկնակի շափով։ Այս ձևի խանգարումները կոչվում են խանգարումներ հայելացին կանալի ազդանշանից։ Հայելացին կանալի խանգարումը հաճախա այնքան ուժեղ է լինում, որ նորմալ ընդունումը միանգամայն անհնարին է լինում։

Սուպերհետոքինային ընդունիչում պրեսելեկտորը թույլ է տալիս ստանալ մեծ հարաբերակցություն ընդունվող ազդանշանի և աղմուկի միջև։ Սուպերում բարձր հաճախականության կառկադի կիրառելիս այս հարաբերակցությունը մեծացվում է։

Անտեննայի և առաջին լամպի կոնտուրի միջև կապը կարող է լինել տարբեր, բայց նա անշուշտ թույլ պետք է լինի, թեպետ սիրողական ընդունիչների համար կարելի է փոքր ինչ ուժեղ վերցնել այն լամպից, որը սովորաբար գործածվում է արդյունաբերական ընդունիչներում։ Բանն այն է, որ սիրողն ընդունիչը կառուցում որոշակի անտեննայի համար, իսկ զրա համար նա կարող է հաշվի շառնել լարման փոփոխումը զանազան անտեննաների փոխելու ժամանակ։ Փոքր ինչ մեծ կապը հնարավորություն է տալիս ստանալ ավելի մեծ ուժեղացում ընդունիչի ամբողջ մուտքի շղթալից։ Բայց կապի ուժեղացումը պետք չէ ի շարք գործադրել, քանի որ ուժեղացման բարձրացման հետ միասին ընկնում է ընդունիչի ընտրողականությունը, որն առաջանում է անտեննայի ազդեցությամբ պրեսելեկտորի դիմադրության մեծացման հետեւանքով։

Պրեսելեկտորի կապը կարող է լինել խնդումիւ-ունակացին (նկար 18)։

Պրեսելեկտորի տված ուժեղացումը պետք է ամբողջ դիապազոնում կալուն մնա: Սա որոշ շափով կախված է կապի ընտրումից:



Ակ. 18

Յուրաքանչյուր դիապազոնի կարձալիքային մասում կոնտուրի ուժեղացումը՝ համեմատած այդ դիապազոնի երկարակիքային մասին հետ՝ մի քանի անգամ աճում է:


Հավասարաշափ ուժեղացում ըստ ամբողջ դիապազոնի կարելի է ստանալ երկու ճանապարհով:

Առաջին միջոցը կայանում է ինդուկտիվ ունակալին կապի օգտագործման մեջ, երկրորդը՝ լարած անտեննայի կոճ կիրառելու մեջ (Ակ. 18 բ.): Վերջինը կարելի է իլլուստրացիա անել 19-րդ նկարում ցույց տված կորերով: Սովորական կոնտուրի համար ուժեղացման կախումը հաճախականությունից Ա կորի ձև ունի ինչպես երկում է՝ այս կողմից ուժեղացումը մեծանում է հաճախականության բարձրացման հետ, որի հետևանքով առաջ է գալիս ըստ դիապազոնի ուժեղացման որոշ անհավասարաշափություն: Եթե անտեննային կոճը լարել տվյալ դիապազոնի ամենացածր հաճախականությամբ, ապա այդ կոճի ժամանակ ստացված ուժեղացումը կփոխվի Յ ձևով: Կոնտուրի և լարած կոճի համատեղ ազդեցությունը տալիս է Յ կորով փոփոխով ուժեղացում:

Անտեննային կոճի լարումն այդ սիմեմայում կարող է ստացվել կամ ի հաշիվ նրա սեփական տարրողության, կամ ի հաշիվ անտեննային ունակության:

Եթե այդ ունակությունները չեն հերիքում, ապա անտեննային կոճին զուգընթաց պետք է միացնել հաստատում ունակության կոնդենսատոր:

Էլ ավելի ուժեղացման հավասարաշափություն կարելի է ստանալ ամբողջ դիապազոնով, եթե կիրառվի ունակալին կապ անտեննային կոճի և կոնդենսատորի մեջ: Այդ կապն ուժեղանում է հաճախականության հետ, բայց որովհետև ունակալին կապով ստացվող լարվածությունը կոնտուրի մեջ պետք է ինդուկտիվ կապով ստեղծվող լարվածության հետ գտնվի հակաֆազի մեջ, ապա որպես արդյունք կստացվի ուժեղացման բավականաշափ լավ հավասարեցում ըստ դիապազոնի:



Ակ. 19

Ընտրելով ցանկացած սխեման և հաշվի առնելով մեր կողմից արված համառոտ դիտողությունները սխեմայի էլեմենտների նկատմամբ, կարելի է անցնել դետալների ընտրության, որոնցից հետագայում պետք է հավաքել ընդունիչը:

ԴԵՏԱԼՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ընդունիչի ամբողջ կոնստրուկցիայում բացառիկ նշանակություն ունի անհրաժեշտ դետալների ընտրությունը: Մեծ մասամբ դետալների որակով է որոշվում ընդունիչի աշխատանքի որակը,

դրա համար նրանց ընտրությանը պետք է վերաբերվել Հատուի ուշադրությամբ:

Քոլորից շատ կիրառվող դետալներից մեկն է Հանդիսանում հաստատում ունակության կոնդենսատորը:

Ըստ նրա միացման տեղի՝ նրան առաջադրվում են տարրեր պահանջներ: Կոնդենսատորի հիմնական մեծություններն են հանդիսանում.— ունակությունը, աշխատանքային լարվածությունը, մեկուսիչ գիմադրությունը, կորուսը, ինդուկտիվականությունը, ծակման լարումը:

Անշատման և շունտային շղթաներում կիրառվող կոնդենսատորները ընտրելիս, եթե կոնդենսատորի վրա գործում են ինչպես հաստատուն, նույնպես և փոփոխական լարումներ, պետք է ուշադրություն դարձնել կոնդենսատորի աշխատանքային և ծակող լարման վրա: Ինչ վերաբերում է նրա ունակությանը, ապա դեպքերի մեծամասնության համար ինչքան նա շատ է, այնքան լավ կլինի: Կոնդենսատորի մնացած պարամետրերն այստեղ այնքան էական չեն:

ՈՒՍԿ շղթաներում օգտագործվող կոնդենսատորները պետք է ունենան որոշակի ունակություն, համապատասխան սխեմաներում ցուց տվածին, և նույնպես փոքր հոսակորուսություն: Սխալ ընտրած ունակությունը ազդեցություն է ցուց տալիս ՈՒՍԿ-ի աշխատանքի ժամանակ:

Թղթե կոնդենսատորները երբեմն օգտագործվում են բարձր հաճախականության շղթաներում՝ ինչպես նրանց անմիջապես կոնտուրին միացնելիս, այնպես և որպես շրջափակողներ բարձր հաճախականության լամպերի անողային և էկրանային ցանցերում: Կոնդենսատորի այդպիսի կիրառման ժամանակ խիստ էական գործոն է Հանդիսանում նրա ինդուկտիվության մեծությունը:

Դրա համար այդպիսի շղթաների համար առավել համապատասխան կլինին այսպես կոչվող «անինդուկցիոն» կոնդենսատորները:

Թղթե կոնդենսատորներն օգտագործվում են նաև որպես անցումներ ցածր հաճախականության ուժեղացուցիչներում: Այս կոնդենսատորները պետք է ունենան մեկուսացման բարձր դիմադրություն: Վատ մեկուսացումը կարող է Հանգել այն բանին, որ լամպի ցանցում դիմադրությունը փոխանակ բացասականի՝ կդառնա դրական և ուժեղացուցիչը կսկսի աշխատել ուժեղ աղձատումներով:

Ապա ի՞նչպիսի աշխատանքային և ծակող լարում պետք է

ունենա կոնդենսատորը յուրաքանչյուր առանձին գեպքում:

Եթե կոնդենսատորին տրվում է միայն հաստատուն լարում, ապա նրա հաշվային աշխատանքային լարումը համենայն դեպք չպետք է քիչ լինի նրա վրա գործող լարումից: Խսկ ծակման լարումը պետք է լինի ոչ քիչ, քան կրկնակի աշխատանքային լարումը:

Ծղթալին միացված կոնդենսատորը, որտեղ նրա վրա միաժամանակ գործում են փոփոխական և հաստատուն լարումներ, պետք է ունենա նրա վրա գործող հաստատուն լարման և մեկուկես— փոփոխական լարման գումարին հավասար աշխատանքային լարում:

Այսպես, օրինակ, եթի լամպի անողի և կատողի միջև միացված կոնդենսատորը 250 վ. անողային լարման և 100 վ. էֆեկտիվ փոփոխական լարման դեպքում ենթարկվում է $250 + 1,5 \times 100 = 400$ լարման ազդեցությանը: Հաշվի առնելով, որ լամպի ժամբարենվածության գեպքում (ուժեղ ազդանշանների ժամանակ) փոփոխական լարումը կարող է ավելանալ, ապա այդպիսի կոնդենսատորի ծակող լարումը պետք է լինի ոչ դաստիարակ 1000 ուժոց:

Պետք է հիշել, որ նորմալ լարմանը գերազանցող լարման ժամանակ աշխատող թղթե կոնդենսատորի ծառայության ժամկետը արագ ընկնում է: Այսպես, օրինակ, լարումը միայն 30 տոկոսով ավելանալու դեպքում կոնդենսատորի ծառայության ժամկետը կրծատվում է 3 անգամ, իսկ լարման մեծացումը մինչև աշխատանքայինի կրկնակի ծառայության ժամկետը կըրճատվում է 30 անգամ: Թղթե կոնդենսատորի ծառայության նորմալ ժամկետը ընդունում են 10.000 ժամ:

Այն դեպքերում, եթե կոնդենսատորը նախատեսնված է դաշտը և բարձր հաճախականությունների միաժամանակյա շրջափակման համար, և եթե համոզված չեն, որ նա ունի ցածր ինդուկտիվականություն, անհրաժեշտ է նրա հետ զուգահեռ միացնել ոչ մեծ փայլարային կոնդենսատոր:

Վաճառքում գտնվող կոնդենսատորների վրա սովորաբար ցուց է արվում նրա ունակությունը և փորձնական լարումը:

Աշխատանքային լարումը պետք է պիտակի (էտիկետի) վրա նշված նոմինալից քիչ փոքր լինի:

Թղթե կոնդենսատորների համար մեկուսացման դիմադրությունը գտնվում է մեկ միկրոֆարադին 100-ից մինչև 1000 մեգամի սահմաններում:

Բարձր ջերմության ժամանակ (60°C բարձր) չի կարելի օգտագործել թղթե կոնդենսատոր; Կոնդենսատորների զորումը պետք է կատարել արագ, որպեսզի խուսափել ուժգին տաքացումից:

Ներկայումս մեր գործարաններում բաց են թողնվում միքանի տիպի թղթե կոնդենսատորներ, որոնք իրարից տարբերվում են ինչպես ունակությամբ, այնպես էլ ըստ կառուցվածքային ձևավորման.

1. Ուղղանկյունաձև մետաղե պատյաններով $0,1\text{-ից } m\text{ինչ}$ 2 միկրոֆարագ ունակությամբ կոնդենսատորներ ($m\text{իկրոֆարագին } լուսմբ$).

2. Կարտոնե պատյաններով գունաձև, ԵՌ տիպի ($\beta\eta\beta\beta$ կրոր) $0,07\text{-ից } m\text{ինչ} 0,5$ միկրոֆարագ և ԵՎԿ տիպի (անինգությունն կրոր), $300\text{-ից } m\text{ինչ} 50,000$ միկ. միկ. ֆարագ կոնդենսատորներ:

Բարձր հաճախականության շղթաներում սովորաբար օգտագործում են փայլարային կոնդենսատորներ:

Մեր գործարաններում բացթողնվող փայլարային կոնդենսատորները $25\text{-ից } m\text{ինչ} 15,000$ միկ. միկ. ֆ. ունակություն ունեն; Այդ կոնդենսատորները իրենց վրա նշանակված ունակությունից $\pm 20\%$ շեղում ունեն:

Սրբափիսի կոնդենսատորը, եթե այն ծծեցված չէ, անհրաժեշտ է ընդունիչի մեջ դնելուց առաջ ծծեցնել մաքուր մելքումի մեջ:

Վերջին ժամանակներս փայլարային կոնդենսատորները սկսեցին մամլել կարբուտի մեջ: Այս կոնդենսատորները սովորականներից տարբերվում են իրենց ունակության խոշոր կայունությամբ: Նրանք առավել հարմար են կոնտուրներին միացնելու համար: Նրանց ունակության թույլատրելի շեղումը կազմում է ± 5 տոկոս, ± 10 տոկոս և ± 20 տոկոս: Ունակության մեծությունը և նրա հնարավոր շեղումը նշանակվում է կոնդենսատորի իրանի վրա:

Ելեկտրոլիտիկ կոնդենսատորները գլխավորապես կիրառվում են ուղղիչի փիլտրերում, անշատիչներում և ցանցային տեղաշարժման շունչատային շղթաներում: Նրանց ունակությունը մեկից $m\text{ինչ} 2$ քանի տասնյակ $m\text{իկրոֆարագի } \pm 2$ ասնում: Նրանք պատրաստվում են $15, 21, 40, 100, 250, 300$ և 450 վ. աշխատանքային լարվածության:

Ելեկտրոլիտիկ կոնդենսատորի բումը մոնտաժի ժամանակ միացվում է և հողին: Կոնդենսատորի անհրաժեշտ ունակությունը սովորաբար ցույց է տրվում սինեմայում: Եթե սինեմայում այդ ցուցմունքները չկան, կամ սիրողն ինքն է կազմում սինեման, ապա նրա մեծության կողմնորոշման համար կարելի է օգտվել 3-րդ սինեմայով:

Կոնդենսատորների տեղը պիտմայում	Ունակությանը
Կապը անտեննային կոճի և առաջին կոնտուրի միջև Կապը շերտային ֆիլտրի պրեսելեկտորի կոնտուրների միջև	5—15մկմկֆ
Կապը (գուգահեռ ունակային) շերտային ֆիլտրի պրեսելեկտորի կոնտուրների միջև	10—20 մկմկֆ
Սինեմայի բարձր հաճախականության մասի փոխազման դիմագրության շունչը	10·00—25·000 մկմկֆ
Բարձր հաճախականության լամպերի էլեկտրացնող ցանցի շրջափակումը	20·000 մկմկֆ
Անջատող դիմագրության շրջափակումը բարձր հաճախականության լամպի անողի շղթայում	0·1 մկֆ
Անյաման կոնդենսատոր դեսելեկտորային լամպի կոնտուրում	0·01—0·25 մկֆ
Սովորական գետեկտորի ցանցի կոնդենսատոր (գրադարան)	50—300 մկմկֆ
Գրիլիկի կոնդենսատորը հզոր ցանցային գետեկտորացման ժամանակ	100—300 մկմկֆ
Անջատող դիմագրության շրջափակում գետեկտորային լամպի անողում	50—80 մկմկֆ
Յածր հաճախականության ուժեղացուցիչի հոսակությունի գրադարանի դիմագրի անողում	0·5—2 մկֆ
Յածր հաճախականության ուժեղացուցիչի հոսակությունի գրադարանի դիմագրի անողում	0·25—2 մկֆ
Դետեկտորի էլեկտրացնող ցանցի շրջափակում	10—40 մկֆ էլեկտրոլիտ
Դետեկտորի էլեկտրացնող ցանցի շրջափակում	0·25 մկֆ
Անցման կոնդենսատոր ուժեղացուցիչում	0·01—0·1 մկֆ
Դետեկտորի և ցանցի հաճախականության կառկաղի անողային բեռնվածքի բարձր հաճախականության շրջափակում	100—400 մկմկֆ
Յածր հաճախականության պենտոդի էլեկտրացնող ցանցի շրջափակում	0·5 մկֆ
Հետերոդինի գրիլիկի կոնդենսատոր	50—150 մկֆ
Հետերոդինի գրիլիկի շրջափակում	0·25 մկֆ
Ֆիլտրի կոնդենսատորը մինչեւ գրանիլը	10—20 մկֆ
Ֆիլտրի կոնդենսատորը գրանիլից հետո	10—30 մկֆ

Բացի կոնդենսատորներից, ընդունիչներում մեծ քանակով կիրառվում են հաստատու դիմադրություններ: Նրանց պարագետիքին են հանդիսանում դիմադրության մեծությունը, ցրովով հզորությունը, աղմուկների մակարդակը և դիմադրության կախումը գործադրված լարվածությունից:

Ցրվող հզորության մեծությունը կարևոր է այն դիմադրությունների համար, որոնց միջից համեմատաբար մեծ հոսանք է անցնում: Այսպիսի դիմադրությունների կարգին կարելի է վերագրել բոլոր այն դիմադրությունները, որոնք մտնում են անողային, կատողային և էլեկտրանային շղթաների մեջ, օրինակ, անողային բեռնավորումների և անջատումների դիմադրությունները, փոխադրության դիմադրությունները, տարբեր տեսակի պոտիենցիությունները և այլն: Ցրվող հզորության մեծությունը վատահրով որոշվում է հոսանքի ուժով և դիմադրության մեծությունով և կարող է հաշվել $P = F \cdot R$ բանաձևով, որտեղ՝ I — դիմադրության միջով անցնող հոսանքն է հաշված ամպերներով, R — դիմադրությունն է հաշված օմերով:

Եթե հոսանքը հայտնի չէ, այլ հայտնի է լարվածության անկումը դիմադրության վրա, այդ ժամանակ ցրվող հզորությունը հավասար կլինի:

$$P = \frac{u^2}{R}$$

Վաճառքի մեջ գտնվող նորմալ կրոսային դիմադրությունները թույլ են տալիս հզորության ցրում մինչև $0,8$ վատու, փոքր գաբարիտային դիմադրությունները (*«լիլիպուտ» տիպի*) $0,1$ վատու և պլաստմասայի մեջ մամլած դիմադրությունները — $0,25$ վատու:

Այն դիմադրությունների համար, որոնք կիրառվում են որպես ցանցերի հոսակորուստ կամ այլ նպատակների համար, բայց այս կամ այն ձևով միացված են ցանցին, շատ էական է հանդիսանում դիմադրության կողմից ստեղծվող աղմուկի մակարդակը: Սա առանձնապես պետք է աշքի առաջ ունենալ այն ժամանակի, երբ ընդունիչում շատ կասկադներ կան և դիմադրությունները գտնվում են առաջին լամպերի ցղթայում:

Ցուրաքանչյուր ընդունիչում առավել շատ պատասխանատու գետալ են հանդիսանում կոճերը: Ընդունիչի զգայունությունը նըշանակալից շափով կախված է նրանց որակից:

Կառուցման ժամանակ կոնտուրների կոճերի ընտրությանը պետք է մեծ ուշադրությամբ վերաբերվել: Դժբախտաբար վահանքի մեջ համեմատաբար քիչ տեսակի տարբեր կոճեր կան և ուղիղություղը շատ դեպքերում ստիպված է կոճերն ինքը կառուցել:

Վաճառքում եղած կոճերից պետք է նշել ՇՀ—235, ԱՐԼ—10, ՇՎՃ և 6Հ—1 ընդունիչների կոճերը: Առավել լավ հանդիսանում են 6Հ—1 ընդունիչների կոճերը:

Եթե կոճերը հաշվում և կառուցում է ինքը ուղղություղը, ապա նա պետք է գիտենա, որ կոճերի լավ որակ կարելի է ըստանալ կարկասի համեմատաբար մեծ տրամագծով: Սակայն այդպիսի կոճերի էլեկտրանացման հետ կապված դժվարություններն ստիպում են սահմանափակել նրանց տրամագիծը:

Երկայնալիք դիմապահոնի համար նպատակահարմար տիպ է հանդիսանում բազմաշերտանի կամ այսպես կոչված ոմիվերուալ փաթթվածքը: Փաթթվածքի առավելագույն ձեռնտու հատվածը է հանդիսանում քառակուսի հատվածքը, այսինքն այնպիսի փաթթվածքը, երբ նրա լայնությունը հավասար է բարձրությանը: Ներկայումս կոճի տրամագիծը վեցցվում է $18-25$ մմ, լարի տրամագիծը — $0,12-0,16$ մմ: Այս տիպի փաթթվածքը համար բոլորից ավելի հարմար է կիրառել ՊԹՌՕ կամ ՊԵԲՕ լար: Հարմարության համար կոճը մի քանի սեկցիաների են բաժանում, ըստ որում մեկ սեկցիան փաթթվում են կարկասին նըստեցրած առանձին օղակի վրա: Այս կոճի տեղափոխումով կարկասի վրա ձեռք են բերում ինդուկտիվության անհրաժեշտ մեծություն:

Շատ լավ որակի կոճ կարելի է ստանալ, եթե նրա փաթթվածքի համար օգտագործել լցոներադ լար, օրինակ, $0,08 \times 5$:

Կոճի կարկասը կարելի է անել լավ չորացրած պրեսշպանից, ինչ ավելի լավ՝ գետինաքսային խողովակից: Պրեսշպանային կարկասը փաթթվումից առաջ պետք է ուշադիր կերպով շորացնել և ծծեցնել մաքուր մեղրամոմով:

Այս կոճերի մեջըամոմով ծծման փոխարեն կարելի է օգտագործել նրանց ծածկումը որևէ սպիրտային կամ ացետիլեռուգային լաքով:

Միջին-ալիքային դիմապահոնի համար բոլորից ավելի նպատակահարմար է կիրառել մեկշերտանի փաթթվածք՝ հետերոդինի կոճերի համար, և բազմաշերտանի՝ անտեննայինների հա-


մար: Մեկշերտանի կոճերը հարժարեցնելու համար փաթաթումը բաժանում են երկու մասի: Այսպիսի կոճի ինդուկտիվության փոփոխումը կատարվում է մեծ սեկցիայի գալարների տեղափոխմամբ մյուսների հանդեպ (նկ. 20): Փաթաթման համար վերցվում է էմալած լար 0,12—0,2 մմ տրամագծով:

Կարճալիքային կոճերը միշտ մեկշերտանի են արվում քայլային փաթաթվածքով: Կարկասի 18—25 մմ տրամագծի դեպքում օգտագործվում է 0,6—0,8 մմ տրամագծով էմալած լար: Փաթաթման քայլը վերցվում է համասար՝ լարի կրկնակի տրամագծին: Ինդուկտիվության հաստատությունն ապահովելու համար, ցանկալի է փաթաթվածքը կատարել նախապես արած առողջությունը: Եթե չի հաջողվում այդ անել, ապա փաթաթվածքը պետք է ամրացնել մոմով կամ լաքով:

Առանձնապես բարդ են պրեսելելուորի կոճերը: Սովորաբար անտեննայի հետ կապված առաջին կոնտուրի կոճերի սիստեմը անվանում են անտեննային տրանսֆորմատոր: Այսպիսի տրանսֆորմատորն ընդհանուր կարկասի համար օգտագործելիութեքեմն փաթաթվում են մի քանի սեկցիաներ և երկարալիքային դիավազոնից միջինալիքայինի փոխարկելու ժամանակ սեկցիաների մի մասը կարճացվում է: Այսպիսով կոնտուրվայի ժամանակ անհրաժեշտ է նախատեսնել կարճացվող կոճերի որոշ բաժանում՝ շկարժացվողներից, որպեսզի խոռափի է կարճփակման սեկցիայի վտանգավոր աղդեցությունից:

Տրանսֆորմատորի անտեննային սեկցիան սովորաբար կոնտուրային կոճի ինդուկտիվականությունից մի քանի անգամ ավելի ինդուկտիվականություն ունի: Որովհետև այս կոճի լավուակությունն էական նշանակություն չունի, ապա նա կազմվում է միայն երկու սեկցիաներից՝ երկար և միջին ալիքների համար: Կոճի անտեննային սեկցիայի ամբողջ փաթաթվածքն անտեննայի և առաջին լամպի կոնտուրի միջև ստեղծում է որոշ ոչ մեծ ունակություն, որը նպաստում է դիավազոնով ավելի համասար ուժեղացման: Կոնտուրների մեջ մտցնելով ոչ մեծ կոնդենսատոր 5—10 մկմկֆ, կարելի է այդ ունակությունը շափով մեծացնել:

Սուպերհետերոդինային ընդունիչի հետերոդինի կոճը համարյա ոչնչով չի տարբերվում լամպի ցանցային կոնտուրի կոճերից: Կապի կոճը ունենալով կոնտուրայինի նման կոնտուրվայտ, սովորաբար 30—50 տոկոս քիչ գալարներ ունի, քան կոնտուրա-




Նկ. 20

ին կոճը: Կոնտուրային կոճի և կապի կոճի միջի տարածությունը մոտավորապես հավասար է 3—5 մմ: Մարտկոցային ընդունիչի համար կապն ավելի մեծ է վերցվում, այսինքն կոճերի միջի տարածությունը փոքրանում է: Առանձին ուշադրություն պետք է դարձնել կոճերի կապին կարճալիքային դիավազոնում, որովհետև այս դեպքում հետերոդինի անոդի կողմից մոտափի ունակությունը (այսինքն նրա անոդ-կատոդ ունակությունը) կապի կոճի հետ միասին կարող է կոնտուր կազմել, որն ընդունակ կը լինի ստեղծել ցանցային կոնտուրի լարումից շկախված սեկցիան տատանումներ: Այս անցանկալի էֆեկտը վերացնելու համար անհրաժեշտ է կատի կոճի գալարների մի մասը փաթաթել կոնտուրային կոճի գալարների մեջ:

Այսպիսի կոնտուրվայինա առանձնապես հարկավոր է մարտկոցային սնումով ընդունիչների համար, որտեղ անոդային և ցանցային շղթայի միջև կապը հնարավորության սահմաններում ավելի մեծ պետք է անել:

Կոճերի էկրանացման համար կիրավում են լատունից կամ ալյումինից պատրաստած էկրաններ: Էկրանների տրամագիծը վերցվում է կոճի տրամագծից երկու անգամ ավելի:



Նկ. 21

Փոփոխական կոնդենսատորները գլխավորապես կիրառվում են կրկնապատկած, եռապատկած և քառապատկած ազբեզատների ձևով:

Այդպիսի ազբեզատների մաքսիմալ ունակությունը հավասար է 350-ից մինչև 500 մկ մկֆ, կախված ընտրած տիպից:

Առավել հարթաց են Համդիսանում՝ 450 մկմկֆ մաքսիմալ ունակությամբ, փոփոխական կոնդենսատորները:

СИ-235 և БИ-234 ընդունիչների պինդ դիէլեկտրիկներով կոնդենսատորները մեծ կորուստ ունեն և շեն կարող օգտագործվել բարձրորակ ընդունիչներում:

ԸՆԴՈՒՆԻՉՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՑՎԱԾՔԱՅԻՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Եթե արդեն ընտրված են սխեման, նրա էլեմենտները և դետալները, կարելի է անցնել ընդունիչի կոնստրուկտիվ ձևավորմանը:

Կոնստրուկտիվ ձևավորումը պետք է շասսիից սկսել:

Նախքան անցնելը առանձին դետալների շասսիի վրա ամենահարաբերագույն դրության որոշելուն, պետք է հաշվի առնել հետևյալ հիմնական կանոնները: Դետալների տեղավորումը շասսիի վրա պահպանային պահանջմանը մեջ առանձին դետալների մասին դիմումը պահպանային պահանջմանը հանդիսանում է:

Ների տեղավորումը մոնտաժի հարմարության տեսակետից պետք է լինի շատ ձեռնտու: Դետալների տեղավորումը պետք է լինի այնպես, որպեսզի կառավարման բռնակները մի կողմ դուրս են, իսկ անտեղնայի միացնելու համար սեղմակները, հողը և ադապտերը՝ մյուս կողմ: Հաճախ հարմար է լինում լամպերը տեղավորել այնպես, որ պահպանվի նրանց ըստ կասկադային հաջորդականությունը:

Դետալների ուղիղությալ տեղավորումը ընտրելու համար ավելի լավ կլինի օգտվել հետևյալ եղանակով: Նախ թղթից կըտրում են ֆիգուրիկներ, որոնք ըստ իրենց ուրվագծումներով և շափով համապատասխանում են ընտրած դետալներին: Դրանից հետո սպիտակ կամ միլիմետրանոց մեծ թղթի վրա դասավորում են այդ ֆիգուրաները, ընտրելով նրանց համար ամենաձեռնտու դրություն: Յուրաքանչյուր կտրած «դետալ» վրա պետք է ցուց տրվեն կետերը, որոնցով դետալը միանում է սխեմայի հետ, այսպես, օրինակ, լամպային պանելի ֆիգուրայի վրա պետք է ցուց տրվեն բները, կոճի ֆիգուրայի վրա՝ բոլոր ելուստները և այլն: Օրիենտիր կերպով որոշելով այն տարածությունը, որի վրա ազատ կտեղավորվեն բոլոր դետալները, թղթի վրա գծագրում են ցանկացած ձևի ուղղանկյունի և ձշտում առանձին դետալների դրությունը: Հետեւելով սկզբունքային սխեմային, աշխատում են կտնել դետալների այնպիսի դրություն, երբ ըստ հնարավորության հաղորդիչների երկարությունը կլինի ամենաքիչ, իսկ երանց փոխադարձ դասավորումը չի ստեղծի գեներացիայի առաջացման պայմանները: ՀՀ-րդ նկարում ցուց է տրված դետալների դասավորման հնարավոր վարիանտներից մեկը՝ 1—V—2 տիպի ընդունիչի համար:

Դետալների հիմնական մասը շասսիի վերևի մասում հարմար տեղավորելուց հետո անցնում են որոշելու այն դետալները տեղը, որոնք պետք է տեղավորվեն շասսիի հիմքի տակը: Դրա համար մի ուրիշ թերթ սպիտակ թղթի վրա անցկացնում են այն դետալները, որոնք պետք է տեսնեն շասսիի հիմքի ներքեւոց (համպային պանելները, կոճերի պանելները և այլն): Դետալների տեղավորման ժամանակ պետք է հաշվի առնել, որ շասսիի հիմքի ներքեւի մասը պետք է շասսիի վերևի մասի հայելացին արտապատկերումը հանդիսանա:

Այն դետալները, որոնք պայման են շասսիի հիմքի վերևի մասում և որոնց կոնտակտները ներքնից են դուրս գալիս, պետք

Հ ցուց տքվեն թղթի առանձին կտրվածքների վրա, նրանց վրա ցուց տալով կոնտակտների դասավորումը:

Անհրաժեշտ է նշել, որ գետալների գրությունը պետք է ընտրել ոչ միայն հարմարեցնելով հնարավոր փոխադարձ ազդեցություններով, այլև աշքի առաջ ունենալով նրանց վրա տեղափորված առանձին կոնտակտների և սեղմիջների ուղղության համապատասխանությունով:

Նախ և առաջ պարզենք թե շասսիի ինչպիսի ձև պետք է ընտրել: Շասսիի հիմքի ձևը պետք է լինի այնպես, որպեսզի շասսիի վրա հարմար և ազատ տեղավորվեն անհրաժեշտ դետալները և կարելի լինի հեշտ կատարել ինչպես մոնտաժն ու լարումը, այնպես և ընդունիչի վերանորոգումը:

Առավել շատ հարմար է հանդիսանում արկղային ձև ունեցող շասսին:

Այդ շասսու հորիզոնական պանելի վրա սովորաբար տեղավորում են կոնտուրների բոլոր էլեմենտները, լամպային պանելները, ուժային տրանսֆորմատորը, էլեկտրոլիտիկ կոնդենսատորները և այլն: Առօքի ուղղաձիգ պանելի վրա տեղավորում են այնպիսի դետալներ, ինչպիսիք են ուժեղության կանոնավորիչը, տեմբրի կանոնավորիչը, դիապազոնի փոխարկիչը և այլն: Հետեւ ուղղաձիգ պանելի վրա տեղավորում են անտեխնայի, հողի սեղմիջները, ադապտերը և գույս են հանում սննման լարը: Նայած սխեմային և դետալների քանակին՝ շասսին կարող է լինել փոքր և մեծ չափի: Շասսիի հիմքի նյութը վերցվում է ըստ ուղիոսիրողի հնարավորությունների: Շասսին անում են երկաթից, ցինկից, ալյումինից կամ անդամ փայտից: Եթե շասսին փայտից է, պետք է այն պատել քետաղն թիթեղով կամ ծածկել փայտավորվելով (ֆոլկայով):

Եթե ենթադրում են շասսին պատրաստել մետաղե թիթից, պապա այն պետք է ունենա 1-ից մինչև 2 մմ. հաստություն: Եթե պատրաստած շասսին բավականաշատ ամուր չի գույս գա, պապա այն պետք է ամրացնել լրացուցիչ պլանկաներով, ինչպես ցուց է տրված 22 ր. նկարում:

Այն բանից հետո, երբ շասսին ընտրված է և նրա վրա դասավորված են (թղթի վրա) հիմնական և օժանդակ դետալները, անցնում են մոնտաժի սխեման կազմելուն:

Նախապես սկզբունքային սխեման են գծում մեծ մասշտա-

բով և նրա մեջ են մտցնում լամպերի, կոճերի, կոնդենսատորների, դիմադրությունների բոլոր նշանակրամները:

Մոնտաժի սխեման կազմելու համար մի թերթ թղթի վրա գծում են շասսին ծավալված տեսքով, գտնում են դետալների առավել հարմարագույն դասավորումը շասսիի ուղղաձիգ պատերի վրա և գծում են բոլոր դետալների գծագրությունն իրենց բընական մեծությամբ:

Երբ այս աշխատանքը կատարված կլինի, գծերով միացնում են առանձին դետալների կոնտակտները համապատասխան սկզբունքային սխեմայի հետ: Մոնտաժային սխեման պատկերելու ժամանակ, ոչ բոլոր գծերը պետք է անցկացնել այն տեղերով, որտեղ նրանք իրականում պետք է անցնեն, որովհետև այդ դեպքում սխեման դժվար ընթեռնելի կդառնա և դժվար կլինի հասկանալ այն՝ մոնտաժի ժամանակ: Դրա համար պետք է խուսափել դետալներն որևէ գծերով հատելուց:

Բացի շասսիի մոնտաժային սխեմայից, օգտակար է նաև գծագրել առանձին դետալների մոնտաժային սխեմաները, օրինակ կոճերի, ցածր հաճախականության տրանսֆորմատորների, ուժային և միջնական տրանսֆորմատորների, դինամիկինը ելքի տրանսֆորմատորի հետ միասին և այլն:

Ավելորդ չի լինի մոնտաժային սխեմաներում ցուց տալ նաև, թե կոճի կամ տրանսֆորմատորի ո՞ր ծալրին է համապատասխանում նրա յուրաքանչյուր սեղմիջը: Փոխարկելի կոնտակտները պետք է համարակալել ինչպես մոնտաժային, այնպես էլ սկզբունքային սխեմայում: Այս բոլորը նշանակալից շափով պարզեցնում է մոնտաժային սխեմայի պատրաստելը և նըրա հետագա օգտագործելը: Մոնտաժային սխեմայի վրա միացնող հաղորդիչների անցկացնելու ժամանակ կոնստրուկտորը պետք է ազատի նրանց միացնողական դրությունը: Ի՞նչ արկե, հընարավոր չէ բոլորը նախատեսնել, և դրա համար շափուք է շրփոթիւ, եթե կոնստրուկցիայի մոնտաժը կատարելու ժամանակ պետք կլինի այս կամ այն ուղղումները:

Երբ մոնտաժային սխեման պատրաստ է և կոնստրուկտորը համոզվել է որ նախատեսնական միացները ճիշտ են և նպատակահարմար, անցնում են սխեմայի մոնտաժին:

Մոնտաժը ավելի հարմար և լավ ստացվում է այն գեպքում, երբ հնարավորություն կա հողի հետ միացման ենթակա սեղմիջները կամ կոնտակտները անմիջապես կպցնել շասսիին: Այսպի-

սի մոնտաժը շատ դյուրին կերպով կիրառվում է, այն ժամանակ, եթե շասսին պատրաստված է պղնձից, ցինկից կամ երկաթից: Մակարդ, երկաթի շասսի կիրառելիս պետք է ուշադիր կլայելել այն տեղերը, որոնց նախատեսնվում է կպցնել հաղորդիչներ: Բայց որովհետև կլայեկելու համար պետք կլինի գործածել թթու, որի հետևանքով որոշ ժամանակից հետո կպցրած տեղում օքսիդացում կառաջանա և միացումը կխանգարվի, դրա համար հանձնարարվում է միացումը կատարել պտուտակներով:

Շասսիի հիմքի հետ միացման տեղերը զոդելուց կամ կոնտակտային պտուտակի ամրացնելուց առաջ անհրաժեշտ է ուշադիր մաքրել:

Շասսիի վրա դետալներ և հաղորդիչներ ամրացնելու համար անհրաժեշտ ծակեր անելուց հետո անցնում են գետալների ամրացմանը: Առաջ պետք է ամրացնել լամպային պանելները, անտեննային և հողի սեղմիջներով պանելները, անցողիկ կոճերը (կոլոդաները), դրանից հետո ամրացնում են ուժային տրանսֆորմատորը, փոփոխական կոնդենսատորը, կոճերը, էլեկտրոլիտիկ կոնդենսատորները և այլն:

Այն բանից հետո, եթե բոլոր դետալները ամրացված են և պարզված է, որ նրանք մեկը մյուսին չեն խանգարում, անցնում են բուն մոնտաժին:


Առաջինը դասավորում են լամպերի շիկացման սնման լարերը, նույնական և անոդային, էկրանային և մինուսային լարերը: Շիկացման լարերը պետք է համեմատաբար հաստ վեցվեն, 0,8—1,5 մմ. տրամագծով: Եթե լամպի շիկացումը կատարվում է փոփոխական հոսանքով, ապա շիկացման լարերից պետք է երրորդ հյուսել: Անողների սնման և էկրանային լամպերի ցանցերի լարերը պետք է մեկուսացված լինեն և բավականաշափ ամուր մեկուսացում պետք է ունենա: Դա նշանակալի շափով հեշտացնում է մոնտաժը և հնարավորություն է տալիս ճշտապահությամբ դասավորել նրանց, նրանցով քիչ տեղ գրավելով շասսի վրա: Բացի դրանից, մեկուսացած լարերը ապահովում են խուսափել հնարավոր միացումներից, որոնք հաճախ տեղի են ունենում շմեկուսացված մոնտաժային լարեր գործածելիս: Մնան բոլոր հաղորդիչները պետք է անմիջապես, դասավորել շասսիի հիմքի վրա:

Շիկացման տրանսֆորմատորի լարերը նույնպես պետք է մեկուսացված լինեն: Նրանց կարելի է հյուսել իրար հետ, բայց

խճճվածքը չառաջացնելու համար յուրաքանչյուր լար նախապես նշվում է ծայրին գոնավոր թել կապելու միջոցով: Միաժամանակ համապատասխան նշումներ են արքում մոնտաժային սխեմայում: Տրանսֆորմատորի բոլոր լարերը իրար հետ հյուսելիս պետք է հիշել, որ առանձին լարերի միջև գոյություն ունի մեծ լարում և դրա համար այդ լարերը պետք է ուժեղացրած մեկուսացմանը վերցնել:

Մնան բոլոր լարերի դասավորելուց հետո կարելի է անցնել այլ լարերի դասավորման, որոնց վրա փոքր լարվածություն կա: Եթե սխեմայում էկրանացրած լարեր կան, ապա այդպիսիները պետք է դասավորել կոնտուր մտնող լարերը դասավորելուց առաջ:

Կոնտուրային լարերը, որոնցով անցնում է բարձր համախական հոսանքը և որոնք շասսիի հարող են՝ ստեղծել անցանկար ունակություն, պետք է մետաղային մասերից, գետալներից և շասսիի հիմքից հետու տեղավորել:



Ակ. 22

Կոնտուրային լարերի դրությունը պետք է լինի այնպես, որի ժամանակ սխեմայի առանձին շղթաների միջև կապը մինիմալ լինի:

Մոնտաժի ժամանակ կարող է պատահել, որ առանձին կոնդենսատորներ կամ դիմադրություններ երկար լարերով օդում կախված լինեն: Այդ դիմքում պետք է կիրառել անցողիկ պլանականեր մետաղաթերթիկներով (նկար 22 գ):


Այդ նույն պլանկաներն օգտակար է կիրառել և այն ժամանակ, եթե ցանկանում են «բեռնաթափ անել» առանձին կոնտակտներ, որոնց պետք կլինի միացնել մեծ քանակությամբ լարեր:

Բոլոր լարերի և կոնտակտների գողելը պարտադիր կարգով պետք է կանխփոլով կատարվի, այլ ոչ թթվով:

Սովորաբար դինամիկն ունենում է իր վրա մոնտաժ արածելքի տրանսֆորմատոր: Եթե այդպիսին նրա վրա չկա, ապա տրանսֆորմատորը պետք է մոնտաժ անել կամ դինամակի իրեն վրա, կամ նրա մոտը: Տրանսֆորմատորի երկրորդ փաթաթվածքը դինամիկի ձայնային կոճի հետ միացնելիս պետք է հիշել, որ կոճի դիմադրությունը սովորաբար քիչ է և դրա համար երկրորդ փաթաթվածքը կոճի հետ միացնող լարերը պետք է ըստ հարաբերության քիչ դիմադրություն ունենան: Դրա հետևանքով լարերի տրամագիծը պետք է լինի այնքան մեծ, ինչքան նրանք երկար են: Ընդունիչց դեպի ելքի տրանսֆորմատորի սկզբնական փաթաթվածքը գնացող լարերը պետք է ունենան լավ մեկուսացում, որպէսիւհետ հողի հանդեպ նրանք մեծ լարման տակ են գտնվում:

Բացի վերևում ցուց տված շղթաներից, որոնք վտանգավոր են ինքնագրգում առաջացնելու տեսակետից, սուպերում վտանգավոր են հանդիսանում նաև ՈՒԱԿ հաղորդիչները և երկրորդ դետեկտորի բեռնվածքի դիմադրությունից դեպի ցածր հաճախականության ուժեղացուցչի ցանցը գնացող լարերը: Վտանգավոր է հանդիսանում նաև կապը երկրորդ միջնական հաճախականության տրանսֆորմատորի և առաջին ցանցի կոնտուրի միջև: Այս կապն առանձնապես ուժեղ է արտահայտվում երկարալիքային դիագագոնի բարձր հաճախականություններում և միջինալիքային դիագագոնի ցածր հաճախականություններում:

Պենտագրիդն որպես առաջին դետեկտոր օգտագործելիս պետք է խուափել կապը հետերոդինի կոճի և կառավարող ցանցի կոնտուրի միջև, ուեղավորելով այս կոճերն իրարից նշանակալի հեռավորության վրա: Այս ազդեցությունն երկար ալիքների վրա այնքան էական չէ, սակայն վճռական նշանակություն ունի կարճ ալիքներում: Այստեղ նույնպես կարող է առաջանալ այսպիս կոչված «ՈՌՆՈՑԻ» երեվույթ, որն արտահայտվում է նրանում, որ կարճալիքային դիագագոնների մի շարք կայաններում



մեծ ուժեղության դեպքում դինամիկում առաջանում է լընդհատվող ոռնոց:

Այս երևությը վերացնելու համար ընդունիչի կոնստրուկցիայում պետք է նախատեսնել հետևյալը.

1. Ուշադիր ամորտիգացիայի ենթարկել փոփոխական կոնդենսատորների ազդեցատը.

2. Կոնտուրի հետերոդինի լարերը շանել երկար և օգում կախված: Այս նույնը վերաբերվում է նաև հետերոդինի ցանցի շղթայի կոնդենսատորին. նրան պետք է ամրացնել որևէ նեցուկի վրա:

3. Ուշադիր ամորտիգացիայի ենթարկել շասսին և դինամիկը:

Սուպերհետերոդինային ընդունիչի մոնտաժի ժամանակ առանձին ուշադրություն պետք է դարձնել կոնտակտների որակի վրա, որովհետեւ հակառակ դեպքում կարճ ալիքներով ընդունումը կուտեղացվի խոշոր թրիկոցներով: Վատ կոնտակտներ հաճախ ստացվում են ընդունող լամպերի բներում և շկալայի լուսավորման լամպերի կոթառներում:

Որպես օրինակ վերլուծենք մեկ սխեմա և նրա համար դիտալների ամենաձեռնտու տեղավորման ընտրությունը շասսիի վրա:

Ենթադրենք, որ մենք ուզում ենք կառուցել ուղղակի ուժեղացման ընդունիչ: Հաշվի առնելով «Ընդունիչի կմախիքային սխեմայի ընտրությունը» բաժնում մեր կողմից արած դիտողությունները, մենք կընտրենք չորս լամպանի ընդունիչի սխեմա, որը ցուց է այլված 23-րդ նկարում:

Ինչպես երևում է սխեմայից, ընդունիչն ունի բարձր հաճախականության ուժեղացման կասկադ 6ԷՇ լամպով, դետեկտոր 6.3Շ լամպով և ցածր հաճախականության ուժեղացման երկու կասկադներ 6Փ5 և 6Փ6 լամպերով:

Ընդունիչի սխեմը կիրառվում է ուղղից 5Ա4 կենուրունով:

Կոչերը տեղավորելու ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ ամենից շատ պետք է զգուշանալ երկրորդ կոնտուրի ազդեցությունից առաջինի վրա: Դրա համար նրանց ըստ հնարավորության իրարից հեռու պետք է տեղավորել: Ել ավելի վրա ազդակը է հանդիսանում առաջին լամպի անոդային շղթայի ազդեցությունը ցանցի շղթայի վրա: բոլորովին անթույլատրելի է

կապը վերջին լամպի անոդային շղթայի և բոլոր նախընթաց լամպերի շղթաների միջև:

Հաշվի առնելով ամեն ինչ, մենք դետալները և լամպերը շասսիի վրա կտեղավորենք այնպես, ինչպես այդ ցուցը է տրըված 21-րդ նկարում: Կոնդենսատորները և դիմադրությունները տեղավորելիս պետք է աշքի առաջ ունենալ հետևյալը: Շրջափակման C₄ և C₇ կոնդենսատորները մեկ ծայրով պետք է անմիջապես էկրանային ցանցին միացվեն, իսկ մյուսով զոդվեն շասսիին: R₂, R₅ և R₁₀ դիմադրությունները մեկ ծայրով անմիջապես զոդվում են լամպային պանելի համապատասխան կատոդային բնին, իսկ մյուսը՝ շասսիին: C₈ կոնդենսատորը մեկ ծայրով լեհեմվում է լամպային պանելի անոդային բնին, իսկ մյուսով շասսիին: Լամպերի էլեկտրոդներին միացվող բոլոր կոնդենսատորները և դիմադրությունները անմիջապես լեհեմվում են լամպային պանելի համապատասխան բնին:

Այս բոլորը կարելի է ճիշտ կիրառել օգտագործելով մեկտեսացված տիպի փոքր գաբարիտային դիմադրություններ և ԵԲ, ԲИՌ կամ «էլեկտրոսիգնալ» գործարանի կոնդենսատորներ:

Այլ տիպի դիմադրությունները և կոնդենսատորը նույնպես պետք է տեղավորել, ինչքան հնարավոր է, մոտ՝ միացման տեղերին սխեմայում և վերցնել ըստ հնարավորության կարճ հաղորդիչներ: Եթե կոնդենսատորների վրա նշանակված է արտաքին շրջկարի ելքը, ապա նրանց՝ սխեմայի մեջ մտցնելու ժամանակ պետք է աշքի առաջ ունենալ այն, որ ճիշտ միացում կհանդիսանալ այնպիսին, որի ժամանակ արտաքին շրջկարի ելքը միացվում է չողի կամ սխեմայի ցածր պոտենցիալ ծայրի հետ: Մի քանի կոնդենսատորների միջով անցնում է համեմատաբար խոշոր մեծության փոփոխական հոսանք:

Մեր սխեմայում այդպիսի կոնդենսատորներ են հանդիսանում՝ C₁₂, C₁₅, C₁₈, նրանց հաղորդիչներն ինչքան հնարավոր է կարճ պետք է լինեն և նրանց համար պետք է այնպիսի դրություն ընտրել, որպեսզի նրանք ոչ մի ազդեցություն ցուց շտան այլ շղթաների վրա: Այսպիսի ազդեցությունից խուսափելու համար երբեմն այս կոնդենսատորները պետք կլինի տեղավորել մետաղ էկրաններում:

Հատուկ դժվարությունների կարելի է հանդիպել C₁₅, C₁₈ կոնդենսատորները տեմբրի կանոնավորիչի փոխարկիչի հետ միշ-

ացնող լարերի պահպանման գործում։ Այս չարեխով անցնող մեծ հոսանքը կարող է առաջ բերել անցանկալի վերադարձ կատ., Այս լարերի էկրանավորումն այնքան էլ հեշտ չէ, ինչպես այդ կարող է երկալ առաջին հայացքից։ Բանն այն է, որ ցուց տըր-ված լարերի միջև մաքսիմալ լարումը սովորաբար հասնում է անողային լարմանը գերազանցող մեծության։ Դրա համար լարի և էկրանի միջի մեկուսացումը պետք է լինի բարձր որակի։

Ավելի լավ է վերը նշված գծեղի ազդեցության վերացմանը հասնել նրանց ռացիոնալ դասավորմամբ, նրանց առանձնացնելով մյուս բոլոր լարերից, շղթաներից, ցանցերից և նախորդ լամպեղի անողներից:

Հաշվի առնելով այն բոլորը, ինչ որ ասկած է «Դեստալների ընտրության» բաժնում գետալների վերաբերյալ, կարելի է որոշ շել թե ինչպիսի կոնդենսատորներ և դիմագրություններ պետք է դրվեն մեր ընդունիչում։ Փայլարային 5—10 մկ մկ ֆ ունակությունը նրան կարելի է փոխարինել առաջին լամպի կոնտուգի կոճի մոտ փաթաթած մեկ-երկու գալարներով (նրա ցանցային ծայրի մոտ)։ C_2 կոնդենսատորը՝ փայլարային կամ թղթային, 5.000—20.000 մկ մկ ֆ ունակությամբ C_4 , C_7 , C_9 , C_{18} թրղթային (ցանկալի է անհնդուկտիվ) 0,1—0,25 մկֆ ունակությամբ։ C_{10} , C_{17} , 0,1 մկֆ ունակությամբ անցման կոնդենսատորներ։ C_8 փայլարային կոնդենսատոր 100—130 մկ. մկ. ֆ. ունակությամբ։ 1—2 մկ. ֆ. ունակությամբ թղթային կամ 10—40 մկֆ ունակությամբ և ցածր ոլտային էլեկտրոլիտիկ կոնդենսատոր։

Այնքան, որքան էլեկտրոլիտիկ կոնդենսատորի միջով, բացի ցածր հաճախականության հոսանքից, անցնում է նաև բարձր հաճախականության հոսանք, դրա համար նրա հետ զուգընթաց պետք է միացնել 5.000—20.000 մկ. մկ. ֆ. ունակությամբ փայլարարին կամ թթվալին կոնդենսատոր:

C_{12} , C_{15} , C_{16} կոնգենսատորները թղթային են, մեծ ծակո-
պական լարվածությամբ։ Նրանց ոմակության մեծությունը պետք
է վերցնել սննդունիչի կարգավորման ժամանակ փոռձի միջոցով։

C_{13}, C_{14} կոնդենսատորներն էլեկտրոլիտիկ են, յուրաքանչյուրը $10-12$ մկֆ ունակովիչամբ: C_{11}, C_{18} էլեկտրոլիտիկ են և ցածր ուլտային, յուրաքանչյուրը $10-40$ մկֆ ունակովիչամբ:

Դիմագրավթյուններ $R_1 = 200-4000$ օմի, փոփոխական է
 $R_2 = 1000-2000$ օմի, կորսային կամ լարային; $R_3 = \text{կորսային}$ -


$40,000 - 100,000$ օմի, R_4 —կոքսային— $6000 - 10,000$ օմի,
 R_5 —կոքսային— $3000 - 10,000$ օմի, R_6 —կոքսային— $100,000 - 200,000$ օմի, R_7 —կոքսային $0,5 - 1$ մեգօմ, R_8 —կոքսային $10,000 - 30,000$ օմի, R_9 —կոքսային $0,5$ մեգօմ, R_{10} —լարային— $300 - 500$ օմի, $30 - 40$ մա հոսանքի համար հաշված.
 R_{11} —կոքսային— $0,5$ մեգօմի:

Ելքի տրանսֆորմատորը պետք է հաշված լինի 7000 օմ բեռնվածքի համար։ Նրա սկզբնական փաթաթվածքը պետք է դիմանա 30—40 մա հոսանքի։

Գրուսելը վերցվում է ցանկացած տիպի, որը դիմանա 40—50
մա հոսանքի և ունենա ոչ ավելի 1000 օմ դիմադրությունից:

Փոփոխական ունակովթյան կոնդենսատորների ագրեգատը նույնպես կարող է լինել ցանկացած տիպի: Ազրեգատին համապատասխան վերցվում են կոճեր կամ պատրաստվում են ինքնուրույն, մեր «Դետալների ընտրությունը» բաժնում արած ցուցմունքներով:

Աւտային տրանսֆորմատորը պետք է հաշված լինի 250 կ-
ուղղված լարման, ընդունիչի 6 վ. լամպերի շիկացման համար և
5 վ. կենուրունի շիկացման համար:




Vol. 24

Դինամիկը պետք է ունենա 2—3 վատտի չափ հզորություն։
Դետալների ընտրությունից և շասմի վրա նրանց տեղավորելուց հետո կարելի է անցնել մոնտաժին։ Մոնտաժը կատարելու պետք է հաշվի առնել վերևում մեր կողմից արված բոլոր ցուցմունքները։


Երբ շասսիի մոնտաժը արդեն արված է և ընդունիչի աշխատանքը կարգավորված, կարելի է անցնել արկղի ընտրությանը:

Պարտադիր չէ, որ արկզն ունենա այնպիսի մեծություն,
որպեսզի դինամիկը և շասսին դժվարությամբ տեղափոխեն,
ընդհակառակը, ցանկալի է որ շասսին և դինամիկը արկզի մեջ
արձակ տեղափոխեն:



Ul. 25

Արկղի կառուցումը կարելի է կատարել ինչպես տախտակից, նույնական էլ ֆաներից: Արկղի պատերի հաստությունը պետք է 6-ից մինչև 10 մմ վերցնել: Արկղի առաջին պատը որոշ չափով հաստ պետք է լինի: Այդպիսի հաստություն կարող է ունենալ նաև արկղի տակը: Շասսին արկղում պետք է ամրացվի ռետինից կամ սպոնգից պատրաստված ամրութիզատորների վրա: Այդ ժամանակ պետք է ուշադրություն դարձնել այն բանի վրա, որպեսզի շասսիի ոչ մի մասը արկղին շղթավի: Կառավարման բռնակի համար առջեկի պատում արած անցքերը պետք է ունենան այնպիսի տրամագիծ, որպեսզի բռնակների սոնակները



44. 26

արկղին շփալչեն: Դինամիկն արկղում պետք է ամրացնել այնպիս, որպեսզի նրա և առաջին պատի միջև 2 մմ ու պակաս տարածություն մնա: Ավելի լավ կլինի, եթե արկղի առջևի պատին նախօրոք դրված լինի 2—4 մմ հաստություն ունեցող ծալազարդված կամ հասարակ կարտոնի թերթ: Դինամիկը ծածկելու կտորը ըստ հնարավորության պետք է ընտրել նոր, լայն հյուսվածք-ներով:


Կոնստրուկցիայի համար ընտրվող արկղները կարող են
լինել տարբեր տիպերի:

24-րդ նկարում ցուցվ է տված դետալների դասավորությունը
68-1 ընդունիչում։ Դա վեցլամպանի սուպեր է, մետաղի լամ-
պերով։ Այս ընդունիչն ունի 6A8-առաջին դետեկտոր-խառնող,

ԵՐԴ միալամպանի ուժեղացոցից, Հ-րդ դետեկտորը և ՈՒԱԿ-ԾԽԾ ու ցածր հաճախականության ուժեղացման 2 կասկադներ 6Փ5 և 6Փ6 լամպերով:

Չորս լամպանի մարտկոցային 4НВ-6 սուպերի դետալների՝ դասավորումը շասսիի վրա ցույց է տրված 25-րդ նկարում:

26-րդ նկարը ցույց է տալիս միջնական հաճախականության ուժեղացման Հ կասկադ և 617 տիպի համակցված կրկնակեդուկտի լամպ ունեցող սուպերի դետալների դասավորությունը:



U4. 27

Առանձին հետերոդին ունեցող 8 լամպանի սուլփիդի դետալ՝ ների դասավորությունը ցուցվ է տված 27-րդ նկարում:

Այս բոլոր նկարներում ցույց տված գետալների դասավորությունը, իհարկե, ուստիսուիրողի համար պարտադիր չէ: Նա միանգամայն կարող է փոխել այս դասավորումը, կախված՝ ռևմֆշած գետալներից և նյութերից:



B R d U u F U h H k P Z H k U

- | | |
|---|----|
| 1. Ինչպես կառուցել բնդունիշը | 3 |
| 2. Բնդունիշին առաջարվող պահանջները | 4 |
| 3. Բնդունիշի կմախմային սիևմայի բնարուրյունը | 5 |
| 4. Սիւմայի հիմնական էլեմենտների բնարուրյունը | 13 |
| 5. Դետալների բնարուրյունը | 33 |
| 6. Բնդունիշների կառուցվածքային ձեռվորությունը | 42 |

Պատմագիտական խորագիր Ա. Չոքովիչի

Գիտութեանի իմ իշխան Խօսրազիր Հ. Հայիսը նիսյան
Տէհէւ կառական Խօսրազիր Հ. Արմագան

Ապահովագույնութիւն

436 3323; mmms; N 89°; Shrub. 1000

Հանձնման է արտադրություն 25.IX.1940 թ.

Սահմանը է սպազրության 23/XII 1940

11

Հայկական ՍՍՌ ԺԿՄ-ին կից «Թէրթերէ» և մասնագութեր տպարան», իրանց

«Ազգակից պատրաստ»




NL0281338

22

9948

9463 № 50 4.



А. ФРОЛОВ
Как конструировать приемник.

Издание Радиокомитета при СНК
Армянской ССР, г. Ереван.